Հրանտ Մաթևոսյան

Բաց երկնքի տակ հին լեռներ

ԲԱՑ ԵՐԿՆՔԻ ՏԱԿ ՀԻՆ ԼԵՌՆԵՐ

Մեր մայրերը հունձ էին անում ու լաց էին լինում: Ձիերին տարել էին տատերազմ եզների հետ բանում էին ու լաց էին լինում: Գուլպա էին գործում ու լաց էին լինում: Հետո լուռ էին լաց լինում, հետո երգելով էին լաց լինում: Երգելով լաց էին լինում և լացի մեջ ասում էին «Շաքրոո՛»: «Մարտիրո՛ս», «Շաքրո՛», «Պիո՛ն», «Գիքո՛ր»: Մենք նրանց լավ չէինք տեսել, մենք նրանց չէինք հիշում, մեր մայրերը լացոտ երգի միջից ասում էին «Շաքրոո՛», և մեր սիրտը լցվում էր մի տեսակ տխուր ուրախությամբ, մի տեսակ թախծոտ ուժեղությամբ, ինչ-որ ծանր հույսով: Դեղին, խշշան արտերում թուխ, մերկ տղերքը հնձի էին եղել՝ նրանց տարել էին պատերազմ, գերմանական տանկերի դեմ: Փափուկ սարերի մերկ երամակները քշել էին պատերազմ, գերմանական տանկերի դեմ: Մերկ այդ երամակից ոչ մի ձի ետ չեկավ: Տղերքից մի երկուսը եկան, և մեր մայրերը լաց էին լինում և լացի միջից ասում էին. «Անդրանիկն եկավ, Շաքրոոո՛»: Բայց... Թի Զավենը չէր կարողանում ծիծաղել, ծիծաղի փոխարեն թի էր անում, «թի՛... թի-թի-թի»: Դանելանց Արտեմ քեռին շվի ուներ: Նվագել էր պատերազմից առաջ, հիմա չէր նվագում, բայց այդ շվին կար, մերկ ու գեղեցիկ՝ կար այդ շվին, և մենք գիտեինք, որ կա: Երբեմն նավթ ու նավթի պայծառ լույս էր լինում, երբեմն մի կտոր հաց էր լինում... Այո, պատերազմը վերջացել էր, և ռուսաստանների ու գերմանիաների հեռու

անհայտություններում արդեն փտող, արդեն հուշ, հող ու ծաղիկ դարձող ոսկորների համար այլևս անհնար էր արտասվել ու արտասուքի միջից դարձյալ արտասվել, և կանաչ, մաքուր մեր սարերում թել առ թել, թելիկ առ թելիկ հյուսվում էր նոր ժպիտը: Ինչպես որ ծաղիկներն են փունջ դառնում այդ ուրախությունը հյուսվում էր հացի մի շղարշիկ բույրից, մի հատիկ սալորից, մի կտոր քարաղից, նավթի պայծառ ճրագից և այն հուշից, որ զոհվել էին լավերը, և որ վերադարձել էին լավերը, և որ պատերազմ չէին գնացել դարձյալ լավերը: Քառանց մի քիչ կաղ, մի քիչ շեկ, մի քիչ չեչոտ, բաց բերանը փլթփլթան ծիծաղով, խաշիլի պես, միշտ լիքը, մի քիչ ֆսֆսան, մի քիչ ծաղրածու, աչքի բիբն սպիտակած Վանին...

Ոչ մի խորհուրդ չեմ տալու, կարդա, մի՛ վախեցիր: Քառանց Վանին աչքը կկոցում ու բերանը ծռում էր: Մթնշաղի մեջ հոտի եզրին կանգնած՝

Վասկա, հա՜չ-չի, ծղրտաց Քառանց Վանին, և շեկլո երկարամազ ներին հոտի մեջ շարժվեց, հոտն ինքն իր մեջ շարժվեց, հոտից ելավ և դանդաղ քաշեց հոտն իր ետևից դեպի Գառնաքար: Հովիվներն այդպես էլ ասում էին: Ասում էին. «Հոտը քաշում է»: Ասում էին՝ «քաշիր», և ներին քաշում էր ոչխարի ծանր հոտը դանդաղորեն, ծանրորեն, հանդիսավորությամբ, ինչպես որ լիքը ուռկանն են քաշում:

Վանկա, հա՜չ-չի, ծղրտաց Քառանց Վանին և խավար աչքը կկոցած նայեց մթնշաղի մեջ կրակագույն ներին խաղաց, թպրտաց ու հոտի միջից դուրս նետվեց պարելով-պարելով դեպի Շիշթափ՝ հայերեն Սուր-բլուր: Հոտը հոսեց նրա ետևից:

Ներին, այո, առաջնորդ այծն է: Արու, տղա, տղամարդ այծը: Ուլիկ ժամանակ նրանց ամորձատում են, այսինքն՝ կոտում, որպեսզի չարթնանան նրանց մեջ տղան ու այծը, այլ ծանրանա նրանց մեջ առաջնորդը, քաշողը, դանդաղը, ապա շատ տաք հացով նրանց պոզերը փափկեցնում, բարձրացնում ու վեր են ոլորում, և հոտը նրանք քաշում են: Այո, շատ տաք հացը եղել էր է՛ մեզանից ու պատերազմից առաջ, և նրանք վաղուց էին երկու

տարբեր հոտերի առաջնորդ եղել: Հովիվներին տարել էին պատերազմ, գերմանական տանկերի դեմ, հոտերը խառնել էին, և Քառանց Վանին մթնշաղի մեջ հիմա ոտից ոտ փոխվեց, խավար աչքը կկոցեց ու ծղրտաց. Վասկա, քաշիր... Վանկա, քաշիր, և հոտը կիսվեց, և նրանք տարան իրենց հոտերը իրենց վաղուցվա Շիշթափ ու Գառնաքար:
Մթնշաղի մեջ պառավ շունը սահեց դեպի Շիշթափ՝ բայց անտեր էր մնում այնտեղ Գառնաքարի հոտը, օրորվեց դեպի Գառնաքար՝ բայց այնտեղ անտեր էր մնում Շիշթափի հոտը. մթնշաղի մեջ պառավ շունը մնաց մոլոր, մնաց և քարշ եկավ դեպի Վանու ոտքերը: Նա այնքան էր պառավ, որ էլ չէր ծնում: Նա ատամ չուներ: Նա վատ էր տեսնում, չէր տեսնում: Նա այնքան էր ոչխարապահ, որ վաղուց չէր ծնում: Նա հոտի ետևից, հոտի շուրջը, հոտի մեջ քարշ էր գալիս: Երբ հոտի գոյությունը մի պահ մարում էր նրա խավար աչքերի, նրա ցամաք հոտառության, նրա մեռնող լսողության տակ ոչխարապահ շան նրա ներսի ծալքերում, նա խուլ, ինչպես որ մտքի մեջ է լինում, ոռնում ու բողոքում էր, և դա աղիողորմ էր իր մահվան ու կորսված հոտի վրա: Հետո նա գտնում էր հոտը, և վերստին ապրելու նրա ուրախությունը լինում էր դարձյալ խուլ ու լուռ, ինքն իր ներսում: Նա հոտը կորցնելու էր իրոք կամ ոչխարապահ շան իր թաքուն ծալքերից, իր գոյությունն անիմաստ էր տեսնելու, և տանելու, անհետացնելու էր ինքը իրեն, նա այդպես էր սատկելու: Նա քսվեց Վանու ոտքերին ու լաց եղավ կիսված հոտի և իր մենակության համար:
Ի՞նչ է, ասաց Վանին, ինչո՞ւ ես լաց լինում: Ասատուրը եկել է, ասաց Վանին, քո մայորը եկել է, ծիծաղեց Վանին, քեզ համար Բեռլին է բերել, ինչ ես ծմրում: Մայո՛ր, կանչեց Վանին: Գնա, ասաց Վանին, ոչխարդ ո՞ւր է, գնա Գառնաքար: Դեռ չես սատկել, գնա գտիր ոչխարդ:
Ինչու եմ պատմում: Ես լրագրում կարդացի, որ հովիվների միջին տարիքը Թումանյանի շրջանի Դսեղ գյուղում յոթանասուն է: Դա նշանակում է, որ եթե հովիվներից մեկը այնպես, պատահաբար քսան տարեկան է, ապա հովիվների մեջ կա նաև հարյուր

քսան տարեկան մի ծերունի: Եթե լիներ այդպիսի մի ծերունի՝ ամբողջ աշխարհը կիմանար, որ կա այդպիսի մի ծերունի: Չկա: Ուրեմն քսան տարեկանն էլ չկա: Ուրեմն բոլորն էլ յոթանասուն տարեկան են կամ մոտավորապես են յոթանասուն: Նրանց համար բեռ է արդեն իրենց մարմինը, բայց դեռ քարշ են գալիս ոչխարի ետևից: Դեռ քարշ են գալիս: Վաղը չեն կարող:
Ոչինչ, ասաց գլխավոր մասնագետը, ծերունիները պինդ ծերունիներ են, դեռ մի հինգ տասը տարի էլ յոլա կտանեն, մինչև մի բան կմտածենք:
Իսկ երիտասարդնե՞րը, հարցրի ես, և նա ոսկեշրջանակ ակնոցը շտկեց ու ասաց.
Երիտասարդները տիեզերք են նայում:
Բայց խորոված են սիրում:
Այո, սիրում են խորոված, ասաց Գլխավոր Մասնագետը:
Խորոված դուք էլ եք սիրում: Ես էլ եմ սիրում խորոված: Դրա համար էլ մենք կօգտագործենք Անգլիայի փորձը: Արոտներն Անգլիայում էլեկտրալարերով բաժանում են մասերի, էլեկտրալարերին թույլ հոսանք են տալիս – հոտն այսօր արածելու է այն տեղամասում, այսօր՝ այս, այսօր՝ այս: Եթե հոտը ուզում է այսօր անցնել վաղվա տեղամաս՝ էլեկտրահոսանքը նրա դնչին մի թեթև խփում է - «այսօր մի՛ անցիր վաղվա տեղամաս, սիրելիս»:
Բայց... հովի՞վը, հովվուհի՞ն...
Կիսաթև վերնաշապիկով, փողկապավորված, ձեռքերը փայլուն գրասեղանին՝ ոսկեշրջանակ ակնոցի երևից Գլխավոր Մասնագետը հանգիստ նայեց և ասաց.
Հովվի գործը ի վերջո որն է՝ հոտ արածեցնելն այսօր այս տեղամասում, այսօր՝ այս, այսօր՝ այս: Հովվի գործն ամենայն բարեխղճությամբ կանի էլեկտրահոսանքը:
Այո, բայց ներին, բայց շները, բայց գայլերը, կրակները, կանչերը, երեկոները, աստղերը...
Գայլն անտառից կելնի ոչխար ուտելու՝ էլեկտրահոսանքը նրա դնչին մի թեթև, կապտակի «այն կեր, ինչը որ քեզ է պատկանում, սիրելիս», թեթևակի ժպիտով ասաց նա, և ես

տեսա, որ նա աստված է, վերևից և ներողամիտ սիրով է նայում այդ մանրիկ բաներին:
Ի դեպ, ասաց նա, ներին ի՞նչն է:
Դուք Գլխավոր Մասնագետն եք, ասացի ես, դուք չգիտեք ներին ինչն է:
Այո, ասաց նա, բայց ինչի՞ համար է:
Հոտը քաշելու, առաջնորդելու...
Այ, տեսնո՞ւմ եք ինչ ավելորդություն է, ասաց նա, և նրա խելացի սառնության դեմ նրա մաքուր առանձնասենյակում ես հիշեցի այս պատմությունը:
Գնա, ասաց Վանին, ոչխարդ ո՞ւր է, գնա: Դեռ չես սատկել, գնա գտիր ոչխարդ:
Մայո՛ր, մթնշաղի մեջ կանչեց Վանին, Ասատո՛ւր:
Մթնշաղի մեջ Ասատուրը կանչեց.
Վանի՛... էդ՝ ե՞ս եմ մայոր:
Բեռլինը դու ես գրավել, դե եսի՛մ, բերանը կիսաբաց՝ նրա պատասխանին ականջ պահեց Քառանց ծաղրածուն:
Բանակային վերնաշապկի կրծքին, յափնջու տակ, մեդալները զնգացնելով՝ Ասատուրը աղջամուղջի մեջ դանդաղ դոփեց դեպի Գառնաքար, և նա հզոր ու պաշտպան էր, և ուրթի երեխաներս այդ պահին, երբ նա գնում էր դեպի Գառնաքար, մեզ փոքր ու պաշտպանյալ զգացինք, մենք հոգոց քաշեցինք ու թուլացած ժպտացինք՝ թե ահա փայտը ձորերի անտառներից եզներով կբերի նա, և եզներն այլևս մեր բոբիկ ոտը չեն տրորի, մեր չոր ծնկին չոր քացի չեն տա, սարալանջերի բաց վերելքներում արևը մեր գլխին այլևս չի խփի. և երբ նա գնում էր աղջամուղջի մեջ մեդալների բրոնզը զնգացնելով դեպի Գառնաքար, և Վանին աչքը կկոցեց ու բերանը բացեց՝ «մայո՛ր, շանդ կանչի», և երբ նա, շանը Գառնաքարի փարախից ձեն տալուց առաջ հարցրեց թե «էդ ո՞ր շունն է», և Վանին ասաց «Չամբարը», և Ասատուրը Գառնաքարի փարախում ծափ զարկեց ու զարմացավ շան պառավության վրա՝ «պահ, քու տունը շինվի» և ձեն արավ Գառնաքարից ուրթ.
Չամբա՛ր: Չամբար, հեյ Չամբար...

և պառավ շանը, որ լաց էր լինում Վանու ոտքերի մոտ, բայց այնքան էր պառավ, որ չէր կարողանում մի կարգին, մի բարձր լաց լինել երկուսված հոտի և իր մենակության համար լաց էր լինում թաքուն ծմրոցով ու խուլ կաղկանձով, Վանին ասաց.
Գնա, Ասատուրը կանչում է, գնա: Ո՛ւր է քու թևը, թևդ ո՛ւր է, իսկ թև նշանակում է գիշերվա մեջ նիրհող փարախի այն կողմը, որ հովիվն ախպոր պես հովվաշան պահպանությանն է հանձնում, և պառավ շունը քարշ եկավ գտնելու իր հին, ջահել, զնգան ժամանակների թևը Գառնաքարի փարախում, և Ասատուրը զրնգաց թավշե երեկոյի մեջ ուրթի, երեխաներիս ու կանանց վրայով Գառնաքարից Շիշթափ իր հին շանը՝ որ եղել էր Բեռլինից, մեդալներից ու Հիտլերից առաջ և լինելու էր այնքան, քանի դեռ հոտի գոյությունը կմնար ոչխարապահի նրա թաքուն ծալքերում.
Արի, հե՛յ Չամբար...
այդ ժամանակ ահա իր վրանի դռանը կծկվեց–շտկվեց–կծկվեց ու փղձկաց Լոլանց հարսը.
Ասատուրն էլ եկա-ա՛վ:
Ախչի, հավաքվեցին կանայք, ամոթ է, ախչի, ասացին կանայք:
Ախչի, ասացին կանայք:
Արժան-անարժան բոլորը եկան:
Պապանձվիր, ասացին կանայք:
Սուս, սաստեցին կանայք, ձենդ:
Եվ ձեռքները ծոցներում նրա շուրջը շարված՝ կանայք նրա հետ լուռ լաց եղան նրա զոհվածի համար և թավշե երեկոյի համար և երեխաներիս նիհարության ու մթնշաղի մեջ մեր չոված աչքերի համար, և իրենց հետ կանայք նրան ուրախացրին Ասատուրի համար՝ որ ողջ-առողջ, բրոնզի զնգոցով, դոփդոփելով եկել էր է՛ բեռլիններից ու Եվրոպաներից... Եվ այդ ժամանակ Վանին կանչեց ուրթի ու կանանց վրայով Շիշթափից Գառնաքար.
Մայո՛ր:
Հե՛յ, Գառնաքարից Շիշթափ՝ կարծես թե Բեռլինից

Ահնիձոր՝ կանչեց Ասատուրը:
Էդ մեդալներիցդ մինն ինձ տուր, էլի:
Լոլանց հարսի դռանը կանայք ասացին.
Սուս, ախչի, մի տեսնենք խելքը տե՞ղն է ետ եկել թե...
Շիշթափից Գառնաքար Վանին դարձյալ կանչեց.
Էդքան մեդալն ինչի՞դ է պետք, մինն ինձ տո՛ւր:
Ասատուրը չէր պատասխանում: Նա այնտեղ շլվել էր իր
մեդալն ուրիշին տալու կարելիության-անկարելիության արանքում, և մենք
լսեցինք Վանու փլթփլթան ծիծաղը, ասես մթան մեջ
աղբյուրը խեղդվում էր: Իր Գառնաքարից Ասատուրն ասաց.
Ի՞նչ ես անելու:
«Կախելու եմ», «կպցնելու եմ», «բա էդքանը քո ինչի՞ն է
պետք» Վանու պատասխանը մտածեցինք երեխաներս, բայց
Վանին լուռ էր, կանայք լուռ էին, մթնշաղի մեջ Շիշթափը լուռ էր,
կարծես թե բան էր պատահելու և ամեն ինչ փշաքաղվում էր:
Պառավ ոչխարապահը խուլ ոռնաց Գառնաքարի իր թևից ու
սկվեց, կարծես խեղդեցին, հետո երեկոն լցվեց հազարավոր
ոտքերի կճղահարմամբ, և դա խուլ երկրաշարժի նման էր:
Թուրքի քոչը գալիս էր:
Թուրքը գալիս էր, ծծաշարը կախ՝ թուլաների մեջ թուրքին
ետուառաջ անելով գալիս էր երկարուկ կարմիր ղանջղ շունը, և
ետևից գալիս էր լայն, խիտ, կեղտոտ, հոգնած հոտը:
Վանին առավ թուրքի բարևն ու ծիծաղեց.
Գող թուրքերն եկան, ժողովո՛ւրդ, զգույշ կացեք, բան
չգողանան:
Հոգնած թուրքը թույլ ժպտաց ու անցավ. իբր թե ինքը
հասկանում է, որ հանաքչին հանաք է անում սովետական
իշխանությունից առաջ էղած-չէղած էդ տեսակ բաների վրա:
Հոտը նրա ետևից մղվում ու մղվում էր, խիտ, կեղտոտ,
հոգնած, խուլ՝ կարծես միջնադարից էր գալիս և նրա անվերջությունը գնում, է՛,
ոլորվում էր ակչակոյուն անհայտություններում:
Մեր սարերի մաքուր անձրևները ամբողջ կանաչ ամառ լվանալու
էին տափաստանների նրա կեղտը, և այդ նույն հոտը մեր փափուկ

սարերում լինելու էր ամպի չափ սպիտակ, իսկ հիմա մղվում էր խիտ, կեղտոտ, հոգնած, խուլ, և իմ թմբկաթաղանթները գվվում էին:
Վանին չկար:
Հոտը հոսեց, ավարտվեց, հոտը վերջավորվեց կովերով թե եզներով, որոնց մեջքին խուրջիններ էին, խուրջինների մեջ՝ երեխաներ, որ բաց աչքերով նայում ու չէին տեսնում, քունները տանում էր: Եկավ, մեր ուրթի մոտ աղեղ տվեց անցավ, ու դարձյալ ճանապարհ մտավ քոչից ետ ընկած կարմիր ոչխարապահը:
Գող թուրքերը գողություն չարի՞ն, ժողովո՛ւրդ, աղջամուղջի մեջ կանչեց Վանին, բայց էդ տեսակ բաները եղել էին է՛ն վախտերը, երբ դեռ սավեթական իխշանություն չէր, դաչաղներն ավազակներից էին գողանում, ավազակները՝ դաչաղներից, դաչաղներն ու ավազակները միասին՝ խեղճերից, և գողության անունը կտրիճություն էր:
Վանի՛, կանչեց ու Գառնաքարի իր մթան մեջ ծիծաղեց Ասատուրը, և մենք հասկացանք, որ գողություն, գողության պես մի բան ուրթի մոտ աղջամուղջի մեջ պատահել է: Վանի՛, ծիծաղեց Ասատուրը, և մենք հասկացանք, որ գողության պես մի բան ինքը Վանին է արել: Ես հիշեցի թուրքի հոգնած քելքն ու խուլ բարևը, ծծերը հատ-հատ կախ երկարուկ կարմիր դանջղին՝ ետուառաջ ընկնող թալաների մեջ, հոտի լայն, խիտ, կեղտոտ զանգվածը, բարձած կովերին ու խուրջինների երեխաներին, կարմիր շանը՝ որ հոտից ետ էր ընկել, ստվերի պես եկավ, վազքով աղեղ տվեց անցավ ուրթն ու մտավ ճանապարհ, և դարձյալ հիշեցի երկարուկ կարմիր դանջղի կարմիր լակոտներին՝ որ մորից ետուառաջ էին ընկնում, կանգնում նայում էին ու դարձյալ վազում:
Նրանք չգիտեին ուր են գնում: Մայրը գնում էր և իրենք գնում էին: Թուրքը գնում էր, մայրը գնում էր, իրենք գնում էին, ոչխարը գալիս էր: Խուրջինների միջից նրանց նոր էին հանել, այլևս քիչ ճանապարհ կար, իրենց ոտքով նրանք կարող էին տեղ հասնել:
Վանի՛, կանչեց Ասատուրը:
Բայց թուրքը ետ էր եկել, ուրթի գլխին ճանապարհի

ոլորանում կանգնած՝ նայում էր: Բան չէր ասում, կանգնել ու նայում էր մեր ուրթին: Լուռ նայում էր մեր ուրթին, մենք լուռ նայում էինք նրան:
Հե՛յ, կանչեց Վանին:
Թուրքը լուռ էր, հետո քայլ դրեց ու ասաց՝ հեչ:
Եսիմ, կանչեց Վանին, թե բան ունես՝ ասա:
Վանին յափնջին գցեց ու կաղալով ընդառաջ գնաց թուրքին: Թուրքը մահակով էր և Վանին մահակով էր, բայց կռիվը և էդ տեսակ բաները եղել էին սավեթական... Վանին ետ՝ յափնջուն նայեց, և ես սկսեցի կողքի-կողքի, մի քիչ – մի քիչ, քայլ-քայլ, կողքի-կողքի...
Վանին հասավ թուրքին և թուրքը հասավ Վանուն, Վանին և թուրքը իրար դեմ կանգնեցին:
Հը, ասաց Վանին:
Հեչ, ասաց թուրքը:
Այդ ժամանակ ես յափնջու մոտ էի: Յափնջու մոտ ես մի քիչ նստեցի, իբր թե վաղուց էի այդպես մթնշաղի մեջ աչքերս չռել, հետո պառկեցի յափնջու մոտ և, անզգայանալով, բոլորից ու ինձանից թաքուն ծոցս առա այդ խլրտուն, փափուկ, դունչները սառը... Ես սկսեցի կողքի-կողքի, մի քիչ–մի քիչ, քայլ-քայլ, կողքանց-կողքանց հեռանալ յափնջուց: Նրանց ճանկերը, նրանց թաց դնչերի հպումը իմ մերկ փորին տհաճ էր: Ես հասա մեր վրաններին, վրանների արանքներով, կեռմաններով, մտա մեր վրան, խցկվեցի թախտի տակ: Եվ այդ ժամանակ Վանին թուրքին ասաց.
Սախլասըն, իբր թե՝ բարև:
Ամոթ է, ասաց թուրքը:
Սան մանըմ դոստում, ման սանըն դոստում, ի՞նչ ամոթ դու իմ բարեկամն ես, ես քո բարեկամն եմ, նյա՞ այիբ, ասաց Վանին և բերանը բաց նայեց:
Թուլեքը տուր, ասաց թուրքը:
Չափալաղդար, ասաց Վանին: Իմ թախտի տակ ես այդ բառը չհասկացա, և այդ ժամանակ թուրքն ասաց.

Որ չգիտես՝ թուրքերեն մի՛ խոսիր:
Բիլերամ, ասաց Վանին: Գիտեմ:
Դե որ գիտես՝ լամուկլարը մանավուր, ասաց թուրքը:
Լակոտները տուր:
Բիլմերամ, ասաց Վանին, հեչ բիլմերամ: Իբր թե՝ չգիտեմ, տեղյակ չեմ:
Սա՞ն, ասաց թուրքը, դո՞ւ չգիտես:
Ման, ասաց Վանին, ես չգիտեմ:
Ամոթ է, ասաց թուրքը, այ բալամ:
Էս մեր սարերն են, բարով եք եկել մեր սարերը, ասաց Վանին, էս Շիշթափն է, էն՝ Գառնաքարը, նյա՞ թուլա, ասաց Վանին, ի՞նչ լակոտ:
Շան էրկու լակոտը, ասաց թուրքը:
Որ չգիտես՝ մի՛ խոսիր հայերեն, ասաց Վանին:
Վանի՛, կանչեց Ասատուրը:
Մայոր դրը, ասաց Վանին: Բեռլինն ինքն է գրավել, մայոր է, Բեռլինըն բիլերսա՞ն:
Բիլերամ, ասաց թուրքը:
Բա որ գիտես՝ ինչո՞ւ ես խոսում, ասաց Վանին: Շուն է, վեցը չի ծնել՝ հինգն է ծնել, բեշ, ասաց Վանին:
Դորդ, ասաց թուրքը, դու երկու հատն ես գողացել:
Կըրխ, ասաց Վանին: Քառասուն:
Դորդ, ասաց թուրքը: Չորսը:
Յուզ, ասաց Վանին: Հարյուր:
Նետվոյ, ասաց թուրքը: Քոնը չեն, նետվոյ:
Ուլախ, ասաց Վանին: Տավար:
Դորդ, պնդեց թուրքը: Չորսը:
«Մին, իմ թախտի տակ մտածեցի ես: Հազար»:
Օքյուզ, ասաց Վանին: Ես չհասկացա:
Էս փետը տեսնո՞ւմ ես, ասաց թուրքը: Շան էրկու լակոտս գողացել ես:
Ամոթ է, ասաց Վանին, էդ տեսակ բաները սավեթական իխշանությունից առաջ են եղել, ի՛նչ գողության, փեշքեշ դրը:

Փեշքեշ չեմ անում, ասաց թուրքը, չեմ նվիրում:
Ի՞նչը չես փեշքեշ անում, ասաց Վանին:
Թուլաները, ասաց թուրքը:
Ի՞նչ թուլա, ասաց Վանին:
Շան լակոտները՝ որ գողացել ես, ասաց թուրքը:
Ի՞նչ գողություն, ասաց Վանին:
Որ գողացել ես շան լակոտները՝ էդ գողություն, ասաց
թուրքը:
Չափալաղդար, ասաց Վանին:
Հեչ ամոթ չունես, ասաց թուրքը, յոխտուր, չունես:
Դաշտի գյուղերից, է՛, եկել ես, բեզարած մարդ ես, ոնց չես
ալարում՝ երկու լակոտի համար էդքան խոսում ես, ասաց Վանին:
Աշնանը դրանք շներ են լինելու, ասաց թուրքը, տուր:
Հիմա ամառ է, ասաց Վանին:
Հետո աշուն է գալու, ասաց թուրքը, տուր:
Ի՞նչ տամ, ասաց Վանին:
Թուլաները:
Ո՞րտեղից:
Յափնջու տակից:
Գնա վերցրու, ասաց Վանին, բայց էդ բարեկամություն
չեղավ:
Աշնանը դրանք շներ են լինելու, ասաց թուրքը, մի՛
նեղացիր:
Տար, ասաց Վանին, աշնանը դրանք շներ են լինելու:
Լակոտները փորիս սեղմած՝ իմ թախտի տակ ես քարացա:
Թուրքը լուռ էր, հետո թուրքն ասաց.
Նայած ով կպահի:
Նայած ով կպահի, ասաց Վանին:
Պահողը գիտի, ասաց թուրքը:
Ես լավ չոբան եմ, ասաց Վանին, կռվի էս չորս տարում
գիլին մի ոչխար չեմ տվել, մի ոչխար չեմ կորցրել:
Գտե՞լ, ասաց թուրքը, իսկ գտե՞լ:
Մենք ոչխար չենք գտնում, ասաց Վանին, մենք լակոտ ենք

գտնում, էդ էլ էն ժամանակ, երբ տեղ ներս նեղ է լինում:
Ունեցածներս մի պառավ շուն է, հայ-հայը գնացել վայ-վայն է մնացել:
Սաղ օլ, ասաց թուրքը, ողջ կաց:
Սանդա սաղ օլ, ասաց Վանին, դու էլ:
Իմ թախտի տակ ես հոգոց քաշեցի, և կանայք այդ ժամանակ Լոլանց հարսի դռանը ձեռքները ծոցներում, երամի պես, ինչպես թռչունն է շտկվում, ոտից ոտ փոխվեցին և բոլորը միաժամանակ մտածեցին, որ Վանին լավն է և Լոլանց Զարիկը՝ նույնպես:
Վանի՛, կանչեցին կանայք:
Հեռու աղջամուղջի մեջ թուրքը խառնվում էր ճանապարհի մթանը, կաղ ոտի վրա Վանին շուռ եկավ:
Վանի, ծիծաղեցին կանայք, խի՞ ես էդքան լավը:
Լա՞վն եմ որ, ասաց Վանին: Լավը չեմ:
Շատ ես լավը, կանչեցին կանայք:
Բա որ լավն եմ, ասաց Վանին, դուք ինչո՞ւ չեք լավը:
Մենք էլ ենք լավը, կանչեցին կանայք, մեր մեջ մի լավը կա, Վանի, մի շատ լավը կա, դեսն արի:
Էդ ո՞վ է, որ ես չեմ նկատել, աչքը կկոցած ու բերանը կիսաբաց՝ սպասեց Վանին:
Լավ չես տեսնում՝ չես նկատել, ասացին կանայք, Զարիկը:
Լոլանց Զարիկը:
Դեսն արի, կանչեցին կանայք:
Լոլա՞նց, հարցրեց Վանին:
Լոլանց, ասացին կանայք և սպասեցին:
Ոչխարս անտեր է, ասաց Վանին: Չեմ կարող գալ:
Զավե՛ն, կանչեցին կանայք, Զավեն, Զավեն: Այ տղա, Թի, ջղայնացան կանայք: Թի Զավեն:
Վանի՛, իրենց վրանում արթնացավ Զավենը, ուզում են պսակեն՝ փախիր, ծիծաղեց Զավենը:
Էդ՝ քե՛զ ով է բանի տեղ դնում, տո Թի, ոչ էն է բարկացան, ոչ էն է սիրեցին իրենց Զավենին կանայք. դու քու փետն առ ու գնա ոչխարդ:

Պսակում են, Վանի, փախիր, ծիծաղեց Զավենը: Ձեռքները ծոցներում՝ կանայք մի պահ մոլորվեցին, ապա.
Տո ես քու գլուխը թաղեմ, խմբովին, երամի պես, քայլ դրին կանայք: Տո Թի, այդ մթան մեջ քարուփետ փնտրեցին կանայք: Զավենը ծիծաղելով՝ «թի-թի-թի-թի», փախավ, և կանայք նրա ետևից փետ շարտեցին: Ոչխարդ ո՛ւր է:
Վանի, շուռ եկան կանայք, դե՛սն արի:
Վանին լուռ էր, ուրթը երեկոյի մեջ լուռ էր, հետո Վանին թուքը կուլ տվեց, թքի հետ կարծես աղամախնձորը կուլ տվեց ու բան ասաց:
Վանի՛, Շիշթափի փարախից կանչեց Զավենը, պսակում են՝ փախիր:
Բա երեխե՞քը, ասաց Վանին: Չէ՞ երեխեք ունի:
Երեխեքն ի՞նչ, չհասկացան կանայք: Երեխեքը Շամուտի սարում տատի մոտ են, մի տասն օրից կգնաս կբերես:
Չէ, ասաց Վանին, բա երեխե՞քը:
Բա երեխեքը ո՞րբ մնան, ասացին կանայք: Վանին լուռ էր:
Վանի, խի՞ ես էդքան լավը, ասացին կանայք:
էդ ո՞ւմ համար ես էդքան լավը, ասացին կանայք:
Վանի, շապիկդ մաքուր կլինի, շորերդ մաքուր կլինեն, ասացին կանայք: Իրիկունները տաք ճաշ կուտես, ասացին կանայք: Շորերիցդ ոչխարի հոտ է գալիս, ասացին կանայք:
Նրանք նրան շրջաապատեցին, իրենց երամի մեջ նրան, խոսելով-խոսխսելով, քաշելով–հրելով, ծիծաղելով-լացելով, տարան Լոլանց հարսի դուռը, ներս հրեցին ու դուռը դրսից փակեցին: Լոլանց հարսը դարձավ Քառանց հարս, և ուրթը լուռ էր:
Իմ մայրը ժպտում էր, լամպի պայծառ լույսի մեջ անընդհատ ժպտում էր, բայց նավթն ափսոս էր, իմ մայրն իջեցրեց պատրույգն ու փչեց լամպը: Ես լսում էի, թե մթան մեջ ինչպես է շրշում նրա ժպիտը, հետո՝ թե քունքերի վրա ինչպես է ցամաքում արտասուքը:
Մեր, այ մեր, ասացի ես, ինչո՞ւ ես լաց լինում: Լաց չեմ լինում, քնիր, ասաց նա: Բա ի՞նչ ես անում: Ուրախանամ եմ, ասաց նա: Մեր, այ

մեր, Զարիկի մարդը լա՞վ մարդ էր: Ասատո՞ւրը: Նրա անունն է՞լ էր Ասատուր, այ մեր: Ասատուրը լավ տղա էր, քնիր: Մեր, այ մեր, բա որ Ասատուրը գա տեսնի Զարիկն ամուսնացել է: Ասաստուրը չի գալու, քնիր: Բա որ հանկարծ գա, գա տեսնի իրենց տունը դատարկ: Չի գալու, ասաց նա, վիրավոր էր, Թիֆլիսի հիվանդանոցում տանջվեց, տանջվեց խեղճ տղան ու մեռավ: Մեր, այ մեր, բա հիմա նրան ո՞վ է հիշելու: Իրա հերնումները, ասաց նա, մեր չուներ՝ հերը: Մենակ հե՞րը, այ մեր: Մենակ հերը, ասաց նա: Մեր, այ մեր, բայց հերը մեծ է, ծեր է, ուժ չունի: Զարիկը, ասաց նա: Մեր, այ մեր, Զարիկը հիմա նրան կհիշի ու լաց կլինի: Թող լաց լինի, ասաց նա, քնիր: Մեր, այ մեր, Վանին չի թողնի, Վանուց կամաչի, չի հիշի: Թող չթողնի, թող չհիշի, ասաց նա, թող մի կուշտ լաց լինի ու ազատվի, մեղք է էն աղջիկը: Մեր, այ մեր, Զարիկը չի հիշի՝ նա կմնա դռանը:

Ո՞վ դռանը կմնա, անկողնի մեջ վրա նստեց մայրս:

Ասատուրը:

Խեղդված, խուլ՝ նա շշնջաց. Հիսուս Քրիստոս. Թիֆլիսի հիվանդանոցում Ասատուրը մեռել է, թաղել են, չկա, ապրողը պիտի ապրի, քնիր:

Մեր, այ մեր, որ մեռնում են՝ լրի՞վ են մեռնում: Լրիվ, ասաց նա: Իրենք էլ չե՞ն լինում: Չեն լինում, ասաց նա: Մեր, այ մեր, էդ ինչպե՞ս է լինում, որ լինում են, հետո էլ չեն լինում: Չգիտեմ, ասաց նա, գնա մահին հարցրու: Բա մե՞ղք չեն, այ մեր: Մեղք են, ասաց նա. տանջվեց, տանջվեց ու հանգավ խեղճ տղան: Մեր, այ մեր, կգա, դուռը փակ կլինի, կմնա դռանը: Տուն չի ունենա, երեխաներն ուրիշի երեխաներ կլինեն, չեն թողնի իրենց գրկի, կինն ուրիշի կին կլինի: Անցորդ մուրացիկի պես, օտարականի պես վիզը թեքած... Մեր, այ մեր, շան լակոտները հիմա իրենց մորը հիշո՞ւմ են: Շան լակոտները հիմա քնած են, ասաց նա, քնիր:

Լռության մեջ ես ականջ պահեցի իմ ներսի ձայներին, և ես լսում էի, թե շան լակոտներից ինչպես են անջատվում նրանց փոքրիկ երազները, և ինչպես է շրշում զեփյուռը խոտերի մեջ, և իմ ներսում շվիի նվագ կար, հյուսվում էր, հավաքվում էր, քանդվում

էր, ցրվում էր... ես կարծում էի նվագն իմ ներսում ու ինձ համար է, միայն ես եմ լսում, բայց դա իմ ներսում չէր, և դա զեփյուռի շրշյունը չէր, և շան լակոտներից իրենց մոր մասին նրանց փոքրիկ երազները չէին անջատվում իր հին շվին իր թեփուկոտ, իր խշխշան շրթունքներով փչում էր Դանելանց Արտեմ քեռին, փչում էր դրսում մնացածների և անկողնի մթան մեջ իրենց ներսի ձայներին ականջ պահողների համար, ծկլթոցով ցամաքող արտասուքի և շրշյունով ծաղկող լուռ ժպիտների մասին, խեղճ Վանու և խեղճ Զարիկի համար, որոնք հիմա, Զարիկը և Վանին, մարդուկնոջ հին լուսանկարի պես, իրար կողքի նստել էին թախտին, աչքները թարթում էին և իրենց ներսում լսում էին Ասատուրի խեղճ գոյությունը, իրենց երեխաների անխռով քունը Շամուտի հեռու սարում, շվիի նվագը և թե ինչ է լինելու հետո:
Վանի, հե՛յ, Շիշթափի փարախից կանչեց Զավենը, տեղդ նե՞ղ է, ծիծաղեց Զավենը, տեղդ տա՞ք է, տեղդ նե՞ղ է...
Այտա, համոզիր, իր սառը փարախից, յափնջու միջից, աստղերի տակ կանչեց Զավենը, տես թե քույր ունի՝ քրոջն էլ ինձ համար ուզենք, ինձ համար ուզենք, ինձ համար...
Իրենց վրանում թախտին կողք-կողքի նստած՝ նրանք լուռ էին, Զավենի խոսքերի վրա գուցե թե լուռ ժպտացին, հետո վրանի դուռը շրխկաց, ու դուրս պրծավ պանրի չափ սպիտակ, աղջամուղջի մեջ շատ սպիտակ մերկ մի երեխա, ու կչկչալով, կտկտալով, ծիծաղից խեղդվելով փախավ, նրա ետևից՝ ցամքոցը թե շապիկը ձեռքին՝ մայր Զարիկը.
Բռնեցեք, բռնեցեք, էդ ավազակին բռնեցեք:
Թող, ախչի, թող գա, Շիշթափի լանջից կանչեց Վանին:
Կմրսի, ասաց Զարիկը:
Հեռու բարձր սարերն սպիտակել էին. կարկուտ էր դրել:
Յափնջու մեջ՝ Վանին նայում էր, թե ինչպես է մրջնաթմբերի ետևը կորչելով ու դարձյալ սպիտակին տալով, կտկտալով ու չորեքթաթ, շաղոտվելով գալիս իր տղան, և նրա հետ գնամ էր կարճ, բրդոտ, բարձր գամփռը, հետո Վանին ասաց.
Ցուրտը դրան ինչ է անելու:

Ես նստել էի մեր վրանի դռանն ու դողում էի: Ես նայում էի հեռու սարերի կարկուտներին ու ավելի էի դողում: Ձեռքերս ծնկներիս մեջ սեղմած՝ ես նայում էի թաց խոտերի միջով դեպի հայրը չորեքթաթվող մերկ այդ երեխային և սարսռում էի: Կարմիր բարձր գամփռի բուրդը տաք էր թվում, բայց այդ մորթին իմը չէր, այդ սառը կարկուտների դեմ՝ ես շվիի պես մերկ էի, ցուրտն իմ մեջ սվսվում էր: Ասում էին խակ սալոր եմ կերել՝ դողէրոցք է, ասում էին բկացավ է, իսկ մերկ այդ երեխան զույգ թաթիկով կառչել էր այծի կրծից, ծծում էր տռուզ պտուկը, այծը նրան քարշ էր տալիս, բայց նա կպել էր ու ծծում էր: Եվ իմ մայրն ասաց, որ սարերն ինձ համար չեն, ես սարերի համար չեմ:

Գնա գյուղ, ասաց իմ մայրը, քաղաք գնա:

Եվ իմ թուրքերենը կիսատ մնաց, և այդ պատճառով էլ հիմա լավ չպատմեցի Վանու և թուրքի զրույցը շան լակոտների մասին: Թուրքն ասաց. «Աշնանը դրանք շներ են լինելու»: Վանին ասաց. «Եթե լավ պահեմ»: Թուրքն ասաց. «Դու լավ չոբան ես՝ լավ կպահես»: Վանին ասաց. «Կռվի էս չորս տարում գիլին մի ոչխար չեմ ավել, մի գառ չեմ տվել, ընկերս եղել է մի հին, մի պառավ, մի մաշված Չամբար»: Թուրքն ասաց. «Ես քեզ լակոտ չեմ տալիս– ախպեր եմ տալիս, ընկեր եմ տալիս»:

Սարերն ինձ համար չէին, բայց քաղաքն էլ ինձ համար չէր: Իմ հորաքրոջ տղան նստեց նամակ գրելու, գրեց, որ եղանակն այստեղ Երևանում լավ է, որ ինքը լավ է, որ ես լավ եմ, որ քնում ենք լրիվ ութ ժամ, նախաճաշին տալիս են ջեմ, կարագ, քաղցր կակավո, ճաշին տալիս են բորշ, կատլետ, կամպոտ կամ խաղող, ընթրիքին տալիս են բիտկի, չախոբիլի, գունավոր թեյ՝ չորս կտոր շաքարի հետ, սև ու սպիտակ հացն ինչքան ուզես, և մեր ուսուցումն առաջ է գնում: Դա ճիշտ նամակ էր: Առավոտյան տողանից երեկոյան տողան՝ այդտեղ ամեն ինչը կար, նա գրում ու լաց էր լինում, ամեն էջի վրա՝ երկու կաթիլ արտասուք: Երկու կաթիլ՝ որովհետև երկու աչք ուներ, ամեն աչքից՝ մի կաթիլ: Երկու աչքից նա կարող էր կաթեցնել շատ կաթիլներ, բայց նամակը կչեչոտվեր, չէր կարդացվի: Դա սուտ արտասուք չէր, դա ճիշտ

նամակ էր, բայց նրա կակավոն ինձ դուր չէր գալիս, նրա գունավոր թեյն ինձ դուր չէր գալիս, նրա արտասուքն ինձ ծիծաղեցնում էդ: Եվ դեռ՝ գյուղացիների ինչի՞ն էր պետք քաղաքային եղանակի լավությունը:
Գրիր, որ շատ չես լաց լինում, որպեսզի նամակն ընթեռնելի մնա, ասացի ես:
Նա կարողանում էր լինել միաժամանակ հուզումնալից և կարգապահ: Նա ծրարեց նամակը, գրեց հասցեն, բայց հասցեի վրա լաց չեղավ, որովհետև փոստատարները նրա արտասուքը բանի տեղ չէին դնի, հասցեն պարզապես սխալ կկարդային... և կոկ հագնված, ձիգ, կոշիկները մաքուր՝ գնաց կանգնեց ուսմասվարի դեմ: Նա նրանից թույլտվություն վերցրեց ծրարը տանելու, փոստարկղ գցելու: Հետո, դարձյալ թույլտվությամբ, նա գնաց մարզիկի հոյակապ իր մարմինը, մերկ, ժամը երեք ռուբլով պահելու գեղարվեստի ակադեմիայի ուսանողների դեմ՝ որպեսզի նրանք քանդակեն իրենց «Ընբոստը», «Պատանին», «Հասունացում», «Ապառաժներ մենք կպոկենք»... իսկ այդ ժամանակ ես նստել էի գրելու իմ նամակը և չէի կարողանում: «Սարերի կարկուտը հալվե՞լ է», գրում էի ես և ջնջում: «Շները ո՞նց են», գրում էի ես և ջնջում: Արտերը դեղնե՞լ են, մոռը հասե՞լ է, հետո որ կարկուտները հալվեցին ու գետը վարարեց՝ մեր լողալու տեղը ավա՞զ չի լցվել, թուրքն ու Վանին չե՞ն կռվել, պապն այգում կանգնա՞ծ է, Աբովենց բալը չի՞ կարմրել, ներին հոտը քաշո՞ւմ է, Ասատուրի անունը դէռ մայո՞ր է, Արտեմ քեռին չի՞ նվագում, էն հեռու լանջի երկու հատ կարմիր կակաչը դեռ էնպես կարմի՞ր են կանաչի մեջ, լոբին ծաղկե՞լ է, շները ո՞նց են...
Ես հանրակացարանից դուրս եկա, գնացի, այդ տապի ու փոշու մեջ Երևան ոլոր-մոլոր քաղաքում գտա Շիլաչի թաղը, Շիլաչի՝ իմ մոր հորաքրոջ դստեր տունը:
Պա՛հ, պա՛հ, պա՛հ, ծիծաղեց իմ մոր հորաքրոջ դստեր ամուսինը, նա թոշակառու ու պարապ էր, ամեն ինչի վրա ծիծաղում էր: Նա հին հաղպատեցի էր, բայց իրեն գյուղացի չէր համարում, այլ համարում էր հեղափոխական, որովհետև

ապստամբել էր, նախ, ամբողջ Հաղպատը, հետո՝ նա տեղյակ էր, թե Լոռվա երկաթուղային կամուրջն ինչպես են խլել հայ հեղափոխականները վրացի հակահեղափոխականներից: Էլ քո ի՞նչն է գյուղացի, ծիծաղեց նա, իսկական քաղաքի տղա ես դարձել, զավադսկոյ, կնքեց նա:
Այդ տապի ու փոշու մեջ իմ մոր հորաքրոջ դուստրը մի քիչ լաց եղավ մեր սառը կարկուտների համար, սառն աղբյուրների ու զնգուն կանչերի համար և պաղպաղակի փող տվեց՝ հինգ ռուբլի: Ահնիձորը քանի հիշես՝ գազով ջուր խմիր, լաց եղավ նա, քանի հիշես՝ պաղպաղակ կեր:
Գյուղը լավն է, բայց գյուղացիք... թթվեց նրա ամուսինը:
Լենինն է ասել, վախեցրեց նա. ընկեր Լենինն ասել է, որ ահնիձորցիք լավ հեղափոխական չեն:
Երեխայի սրտին մի կպիր, հազվեց իմ մոր հորաքրոջ դուստրը:
Օրենքով պիտի գյուղում էլ քաղաքացիք ապրեին, քաղաքում էլ, հանգիստ ասաց իմ մոր հորաքրոջ դստեր ամուսինը:
Էդ ո՞նց, շշնջացի ես:
Չհասկացա՞ր, որ կատակ եմ անում:
Հասկացա:
Կատակ էի անում, ասաց նա: Ոչխարապահ շան պես պիտի հավատարիմ լինել, ոչխարապահ շան պես:
Հինգ ռուբլին բռիս մեջ՝ ես պտտվեցի քաղաքում:
Կենտրոնական շատրվանն առատ խշշոցով փշրվում էր: Կառավարական տան դեմ հյուրանոցի շենքը զարդարվում ու զարդարվում էր շինարար զնգոցների մեջ: Ես նայեցի հյուրանոցի շենքին, նայեցի Կառավարական տանը և դարձյալ նայեցի հյուրանոցի շենքին, և հյուրանոցի շենքի ծանր կամարները մտածում էին Կառավարական տնից էլ գեղեցիկ լինել, իսկ Կառավարական տունը կեցած էր որպես կատարելություն և հյուրանոցի շենքին ասում էր՝ եղիր, և մյուս շենքերին ասում էր՝ եղեք:

Ես պտտվեցի քաղաքում:
Նկուղային զով դահլիճում տղաները մարզվում էին: Նրանց
մեջ բռնցքամարտի չեմպիոն կար: Մարզիչը վստահ էր, որ նրանց
մեջ չեմպիոն կա: Մարզիչը գիտեր, որ չեմպիոնը նրանց մեջ է, բայց
դեռ չգիտեր ով է չեմպիոնը: Ով որ քրտներ: «Աշխատեք,
աշխատեք, ասում էր մարզիչը, մի՛ կանգնեք: Ձախդ, ձախով,
ձախով», ցատկոտում էր մարզիչը: Մատով՝ նա ինձ ներս կանչեց:
Ձեռքի շարժումով՝ դարձյալ ներս կանչեց: Ես կարմրեցի,
պատուհանի ճաղերից հեռացա, դանդաղ թափառեցի քաղաքում:
Փողոցը լցվեց աղջիկներով: Բժշկական ուսումնարանի,
բժշկական ինստիտուտի, բանասիրության բաժնի դասերը
վերջացել էին, և մայթերը, փողոցը, խաչմերուկները լցվեցին
աղջիկների շողք ու հրճվանքով, արևային ակնոցներով, զգեստների հրճվանքով,
իրենց շատությամբ, իրենց լավությամբ, իրենց
հմայքով:
Ըմբոստ, ասացի ես իմ հորաքրոջ տղային, երեք ռուբլի
փող տուր:
Ինչի՞ դ է պետք, ասաց նա:
Եթե երեք ռուբլի փող տաս՝ ութ ռուբլի կունենամ, ասացի
ես, եթե ութ ռուբլի ունենամ՝ կգնամ Դիլիջանով գյուղ:
Ահնիձո՞ր, ոչ էն է հարցրեց, ոչ էն է հեգնեց նա:
Ահնիձոր, ասացի ես:
Ի՞նչ կա Ահնիձոր, հարցրեց նա:
Դու ինչո՞ւ էիր լաց լինում:
Ես լաց եղա՝ պրծավ իմ Ահնիձորը, հանգիստ ասաց նա,
դու էլ լաց եղիր՝ թող պրծնի:
Խոնարհ, երեք ռուբլի փող տուր, ասացի ես, երեք ռուբլի
փող տուր, Ըմբոստ, Պրոմեթեոս, Հսկա, Հրեշ:
Չունեմ, ասաց նա, ունեմ՝ վաղվա համար է, վաղը, ասաց
նա, ընդամենը վաղը, երբ արդեն մեծ լինենք, էդ փողերը մեզ
պետք են գալու:
Բայց հիմա ինչո՞վ գնամ Դիլիջան:
Մի գնա Դիլիջան, ասաց նա:

Գնում եմ, ասացի ես:
Է, գնա, ասաց նա:
Փողս քիչ է, ինչո՞վ գնամ:
Գնացքով, ասաց նա: Գնացքի համար քիչ չի, որ ուզենաս՝
ծծակ էլ կառնես:
Ավտոյով՝ Դիլիջանով մոտիկ է, Դիլիջանից դենը սարերն են,
ի՛նչ գնացք ու ծծակ:
Ծծակ, ասաց նա, ծծիչ, սոսկա, որովհետև դեռ երեխա ես:
Դու արդեն մեծ ես, ասացի ես, բիտկի, կատլետ, գունավոր
թեյ, չախոբիլի, երկու կաթիլ արտասուք:
Հետո ես կանգնել էի քաղաքի գլխին, սպասում էի, որ անցնող
մեքենաներից որևէ մեկն ինձ վերցնի հինգ ռուբլով, և ինձ թվում
էր, թե այն ժամանակ՝ երբ Կառավարական տունն ինձ դուր էր
գալիս և հյուրանոցի ծանր կամարներն ինձ դուր էին գալիս, և այն
ժամանակ՝ երբ բոնցքամարտիկների թեթև, խոնավությունն ինձ
դուր էր գալիս, և այն ժամանակ՝ երբ մայթերն ու խաչմերուկները
լցվեցին աղջիկներով ես դավաճանում էի և դարձյալ դավաճանում էի և կրկին
դավաճանում էի սարերին, և Վանին ու թուրքը
աղջիկների այդ հորդուն շքեղության դեմ խեղճ տգետներ էին, և
պառավ շունը նվում էր է՛ երազում տեսածի–չտեսածի չափ հեռու
մի անհայտությունում լքված... թող նվա, նվա ու սատկի:
Մի մեքենա կանգ առավ: Ես մոտեցա հարցնելու, թե կտանի՞
ինձ հինգ ռուբլով... և իմ մազերից, իմ ծոծրակից, իմ ձեռքերից ու
թևատակերից բռնած ներս քաշեցին, դրեցին իրենց տակ ու
նստեցին վրաս ֆիզկուլտուրայի դասատուն, ուսմասվարը, իմ
հորաքրոջ տղան և էլի մի կամ մի քսան հոգի:
Վայրենիներ, աղաղակեցի ու թարտացի ես:
Իմ վրա նրանք լուռ էին, հետո իմ հորաքրոջ տղան ծիծաղեց.
Քառանց Վանուն կարոտել էր:
Կարոտ է, հո սովածություն չի՝ կանցնի, եկավ ուսմասվարի
ձայնը, մի քիչ տղամարդու համբերություն ունեցիր՝ կանցնի:
Վայրենիներ, բռիներ, գյուղացիներ, հեղափոխականներ,
հակահեղափոխականներ, անհասկացողներ, բաց թողեք ինձ,

աղաղակեցի ու թպրտացի ես:
Կատակ եմ անում: Վաղուց փոշտացել եմ, կեղտոտ նստատեղի փոշին հիմա իմ ռունգներում չի, իմ ծոծրակը հիմա չի հիշում
իմ հորաքրոջ որդու մկանուտ նստուկի պնդությունը, և արդեն
կատակ եմ անում: Բայց հենց այդ պինդ նեղվածքում էր, որ ես
զգացի բաց սարերի սանձակոտոր ազատությունը:
Բաց թողեք, թպրտացի ես: Կորեք իմ վրայից, զավադսկոյ
շանորդիներ:
Ուժեղ է, ասաց ֆիզկուլտուրայի դասատուն, ինչո՞ւ չի
բռնցքամարտի գալիս:
Թքած... բայց իմ հորաքրոջ տղան իմ գլխին նստեց, և ես
չկարողացա թքել ուր որ հարկն է:
Տես, ասացին նրանք բժշկական ինստիտուտի մոտ, եթե
գլուխդ ցավում է՝ էս աղջիկներին ասենք բուժեն:
Եթե ցավող ատամ ունես՝ տանենք էս աղջիկները հանեն,
ասացին նրանք բժշկական ուսումնարանի մոտ:
Ատամը ոչինչ, ասացին նրանք, ատամը գյուղում էլ են
հանում:
Գյուղում աքցանը գցում են ու կոպի՛տ քաշում, ասացին
նրանք, կամ ատամը կջարդվի, կամ աքցանը: Իսկ սրանք
ցավազրկում են:
Գիտե՞ս ոնց են ցավազրկում, ասացին նրանք. խաժ
աչքերով նայում են՝ դողում ու անջատվում ես, մեկ էլ տեսնում ես
ատամդ չկա, իսկ իրենք նայում են խաժ աչքերով:
Սա տպարանի շենքն է, ասաց իմ հորաքրոջ որդին. եթե
բանաստեղծ դառնաս ու սարերի մասին բանաստեղծություն գրես՝
էստեղ են տպելու:
Սարերը՞, ոռնացի ես:
Այո, սարերը, ասաց նա, հետո՞ ինչ:
Վանին, ոռնացի ես, Ասատուրը, ոռնացի ես, ներին,
կարկուտը, շները...
Շները ես էլ գիտեմ, հետո՞ ինչ:
Դու ոչինչ էլ չգիտես, հեկեկացի ես:

Գիտեմ, ասաց նա, շները գիտեմ, լսիր:
Դու մենակ չախոբիլի գիտես, խեղդվեցի ես, ու գունավոր թեյ:
Նայիր, ասաց նա և մատով Նորք ցույց տվեց: Նորքում նա ցույց էր տալիս կարմիր մի մենաւոուն՝ արևոտ մի այգու մեջ: Տեսա՞ր, ասաց նա, 33.000 ռուբլի արժե, ծախում են, արդեն ունեմ 333 ռուբլի: Բայց լսիր, ասաց նա, շներն էլ գիտեմ: Լսո՞ւմ ես, շների մասին եմ պատմում:
Դու քո գունավոր թեյի մասին պատմիր:
Չէ, շների մասին եմ պատմում, լսիր: Ձորից է՛ ուրթը չէր երևում: Շիշթափը թուրքի մի փափախի չափ էր երեում: Գնա ու գնա: Մոռ էի քաղել, ամանս լցվել էր, գնում էի ուրթ: Մոռ էի կերել, սիրտս խառնում էր ու քաղցած էի: Լսո՞ւմ ես: Արևը: Խփում ու տափակում էր գետնին: Գնա ու գնա: Շիշթափը մի փափախի չափ էր երևում: Մի չորս-հինգ օր առաջ անձրև էր եկել: Որ սարերում կարկուտ դրեց՝ էն անձրևը: Քաղցա՛ծ, մոռին որ նայում եմ՝ սիրտս խառնում է: Մեկ էլ տեսնեմ կարմիր մի շուն՝ կողքին մի յափնջի: Ասացի լավ է, հովիվն ուրեմն մոտերքում կլինի, ձեռքին հաց կունենա: Ոչ մի հոտ ու հովիվ... ամայի բաց լանջերն են ու էդ մի կարմիր շունը՝ յափնջու մոտ: Քաղցա՛ծ, փորը կպել է մեջքին:
Վանու Բոբը:
Այո, Վանու Բոբը: Վանին ուրեմն անձրևի տակ է ընկել, յափնջին ծանրացել, ծանր բեռ է դարձել: Դե հիմի արի քարշ տուր էդ բեռը է՛ ուրթ, Շիշթափը մի փափախի չափ է երևում: Վանին յափնջին թողել է էդտեղ, որ չորանա, շունը մնացել է յափնջու մոտ: Սարի չորս–հինգ օրվա տժժան արև յափնջին չորացել է, շունը էդ արևի ու էդ քաղցի մեջ նիհարե՛լ, հատել է, գլուխը թաթերին՝ աչքերի ճեղքից հազիվ նայում է ու ես ինչ իմանամ տեսնո՞ւմ է, չի՞ տեսնում: Նայում եմ էդ սև, շոգ յափնջուն, նայում եմ ուրթին, ուրթն էնքան է հեռու՝ որ ալարում եմ: Դու ի՞նչ կանեիր:
Յափնջին կվերցնեի՝ շունը ետևիցս կբարձրանար ուրթ, ասացի ես:
Եթե շունը յափնջին տար, եթե կարողանար ետևիցդ գալ:

Շանն ու իրա ախպորը թուրքից ես եմ գողացել:
Բայց Վանին դու չես, ասաց իմ հորաքրոջ տղան Երևան
քաղաքի մեր հանրակացարանում:
Լուսամատից երևում էր սպորտային լողավազանը: Մի
պատանի ոստնակի ամենաբարձր հարթակի եզրին թևերի վրա
կանգնել էր, անշարժ կանգնել էր, նրա մկանները թուխ, բրոնզի
փայլ էին տալիս, հետո դանդաղ կորվեց, աղեղվեց, պտտվեց ինքն
իր մեջ կծկված, սրվեց ու խփվեց ավազան: Դա գեղեցիկ ցատկ էր:
Մի աղջիկ հանվում էր, դանդաղ հանվում էր:
Ծանոթ ունեմ, ասաց իմ հորաքրոջ տղան, գնա՞նք
լողալու:
Էդ շանն ու իրա ախպորը թուրքից Վանին ու ես միասին ենք
գողացել, ասացի ես:
Հետո՞ ինչ, դրանք հիմա միայն Վանու շներն են: Թուրքը
գնացել մտածել, մտածել ու փոշմանել էր, եկավ կանգնեց Վանու
գլխին թե՝ էրգու օխցար, այսինքն երկու ոչխար տուր: Ես քեզ ինչի՞
համար երկու ոչխար տամ: Թուլեքիս հախը ցորս օխցար դուր: Ես
բե՞կ եմ, խա՞ն եմ, քեզ ո՞րտեղից չորս ոչխար տամ: Դե որ ոչխար
չկա՝ թուլեքս տուր: Հրեն շներդ, գնա տար: Ո՛նց տանի, խեղճ
թուրքին քիչ էր մնում խեղդեին շները:
Չգիտեմ, ասացի ես: Վանին յափնջին վրաներն էր գցել,
թուրքի հետ խոսում էր, ես շապկիս տակ առա ու փախա: Սառը
դունչները քսվում էին փորիս:
Այո: Ասացի յափնջին տանեմ ուրթ՝ շունը ետևիցս թող գա:
Հիմա մոտենում եմ շունը տեսնո՞ւմ է, չի՞ տեսնում, հասկանո՞ւմ է,
չի՞ հասկանում, հոգնա՛ծ: Հեռու գվվոց է գալիս, ասում եմ գետակի
մոմոցն է կամ ականջներս են քաղցից գվվում: Կռացա որ
վերցնեմ՝ շունը կանգնեց ու հաչեց: Հաչոցի ձեն չկար, փորում
հազիվ «ավ»՝ բերանը լուռ բացեց ու փակեց, ետևը գետնից չի
կարողանում կտրել, առջևի ոտքերի վրա օրորվում ու թույլ
գոմռում է՝ նվոցի պես: Ա՛յ շուն, ա՛յ հիմար, ա՛յ ախպեր, ա՛յ
անհասկացող, ես եմ, գող չեմ, յափնջին տուր՝ ուրթ գնանք:
Յափնջին ինչ է, այ շուն, այ հիմար, որ կողքին վեր ես ընկել

սատկում ես, վեր կաց, մի կողմի վրա գնա, մի բան գտիր կեր ո՛չ. ընկել է, ու էդ բաց, ամայի սարերում ինքն է ու յափնջին, ուրիշ ոչինչ չի ճանաչում:
Աղջիկը հանվելը վերջացրել էր, հիմա, կանգնած էր ցածի ոստնակին: Այդպես կանգնած էր, հետո հանկարծ ոստնեց, բացված, ծանր ու ճկուն՝ մի պահ ճոճվեց ու սուզվեց:
Չգնա՞նք լողալու, ասաց իմ հորաքրոջ տղան:
Եվ քաղաքում ծնված, քաղաքում մեծացած, քաղաքում դաստիարակված աղջկա բացսիրտ մտերմությունը, մի քիչ՝ մի փակ ժպիտի չափ հովանավորող մտերմությունը հուզիչ էր: Եվ ավազանի արևոտ մաքրությունը գեղեցիկ էր: Եվ Հանքավան հովտի շեփորային առավոտներն ու սրսփուն իրիկուններ՛ն էին գեղեցիկ՝ երբ ես ջոկատավար էի, և բարձր դասարանցիների ծղրտուն հրճվանքը՝ երբ մաքուր առավոտների միջով նրանք գալիս էին դպրոց և ես գնում էի ինստիտուտ: Եվ ծովն ու ծովափի լո՛ւյսն էին գեղեցիկ, և օդանավի հզոր տառապա՛նքը՝ որ նրա սրահների լուսավոր, թեթև, մաքուր, հարմարին փափկության մեջ չէր զգացվում, գրեթե չէր զգացվում: Աշխարհը՝ մե՛ծ, լուսավոր, գեղեցիկ... Էդիտա Պիեխան զնգալով երգում էր ի՛նչ Վանի, ի՛նչ շուն: Օդանավի իմ վերևից Երևանը խճուղին Սևանը–Դիլիջանը սարերը մեկ և նույն բռան մեջ էին երևում, իսկ էն հին պատանին ահա՝ ես, հինգ ռուբլին ձեռքին, իր համար հոգս էր շինել Երևանից Ահնիձոր փախչելը մրջյունը թմբե լեռներ է անցնելու: «Արի տանեմ», քիթս օդանավի լուսամուտին հպած՝ ժպտացի ես:
Շիշթափը չէր երևում, ամբողջ լեռնաստանն այնպես փոքր էր, որ անհնար էր այնտեղ տեղավորել այնքան շատ-շատ ու այնպես մեծ-մեծ այդ կանչերը. Զավե՛ն հե՛յ Զահրումա՛ր Շունն ուր է՛ Յափնջու մո՛տ Յափնջին ուր է՛ Հրեն ձորում թողել եմ, թրջվել էր՝ թողել եմ, թողե՛լ... Եվ երիտասարդ բանաստեղծների՝ աղջիկների ու տղաների մեր խումբը օդանավի մեջ այնպես անկաշկանդ էր, գեղեցիկ, և ոսկի փարթամ մազերով գերմանուհին այնպես շռայլորեն էր գեղեցիկ, որ ամոթ էր նրա մոտ և նրանց մոտ հիշել Զարիկի ու Վանու խեղճ ամուսնությունը: Բերանը փակ՝ գերմանուհին ծամոն էր

ծամում և նայում էր արևային խոշոր ակնոցի
ետևից, նայում էր և լուռ ծամում, և իր աննշմար ժպիտի ու խոշոր մութ ակնոցի ետևում նա գիտեր, որ իմ ներսում սարերի անքաղաքավար կանչեր կան, և նա նայում ու լուռ ծամում էր գեղեցիկ մեծ բերանով, և ես կուչ էի գալիս, և նա ժպտամ էր մութ ակնոցի ու հաստ շրթունքների ետևում: Ես ինձ սեղմում, կուչ էի գալիս և ինձ ասում էի. «Սեղմիր, սեղմիր, փոքրացրու քո ներսում, ոչնչացրու՝ թող չլինեն, սեղմիր, սեղմիր՝ թող նվան, նվան ու սատկեն, սեղմիր»:
Բայց դա ճակատագիր էր:
Գերմանուհու հետ մենք գնացինք Գառնի, և նա շրթունքները կլորացրեց՝ «օ». գնացինք Գեղարդի վանք, գնացինք Սևան, և գերմանուհին լողացավ, գնացինք Զվարթնոցի ավերակներ: Գերմանուհին քայլում էր՝ և մենք նրա շուրջը վազվզում էինք, գերմանուհին շրջվում էր՝ և հայ տղաների մեր խումբը նրա հետ շրջվում էր: Գերմանուհուն ես տարա պատկերասրահ, հետո Հովհաննես Թումանյանի տուն-թանգարան, ապա Հին ձեռագրերի մատենադարան, և գերմանուհին ծամոնը թքեց ու ասաց, որ ինքը քաղցած է: Մենք գնացինք Բարձունքի ռեստորան, խորոված կերանք և կոնյակ խմեցինք: Ռեհանը գերմանուհուն դուր եկավ, բայց ռեստորանում հիմա ռեհան չկար, և մենք գնացինք իմ հորաքրոջ որդու Նորքի այգին: Թարխունն ավելի դուր եկավ, և տնից լավաշ ու խաշած ձու բերեցին, հետո պանիր բերեցին, հետո երշիկ բերեցին, հետո սեղան բացեցին այն ծիրանու տակ, որ Բեռլինում զոհվելուց առաջ տնկել էր այդ այգու հին տերը, և գերմանուհին ասաց, որ հայերը շատ հյուրընկալ ժողովուրդ են, և մենք մեզ հյուրասեր ու գեղեցիկ զգացինք: Հետո մենք մաքուր առավոտի միջով իջանք քաղաք, Այգեստանով, լավաշի փռան մոտով, Սայաթ-Նովայի մաքուր փողոցով անցանք Գետառը, յոթ չինարու մոտով մտանք Ալավերդյան ու թեքվեցինք Թումանյան, որպեսզի ես նրան տանեմ գեղարվեստական իրերի՝ արծաթ գոտիների, արծաթ ականջօղերի, արծաթ ապարանջանների, արծաթ ըմպանակների սրահ, և անկյունադարձում՝ Խոցերի

հիվանդանոցի քարե սանդուղքին գյուղացի մի կին էր նստել, ննջում էր, և ես իմ գերմանուհուն հրեցի դեպի մյուս մայթ: Թևանցուկ՝ ուսով ու արմունկով հրեցի դեպի մյուս մայթ, և նա ասաց.

Դու գյուղացի՞ ես:

Ն՝ ասացի ես, ոչ:

Երևանցի՞ ես:

Դա, ասացի ես, այո: Երևանցի:

Խոցերի հիվանդանոցի դռան տակ, քարե սանդուղքին՝ որ հենց մայթի վրա էր, գյուղացի մի կին էր ննջում, թե՞ շշմած էր: Նրա գոգին վանդականախշ շալի մի կապոց կար: Շալը գոնե արձակեր, գցեր ուսերին, գոնե կապոցին նստեր, թե չէ՝ ամբողջ գիշերն այդպես սառը քարին:

Արծաթ իրերի տաղավարը դեռ փակ էր:

Խոլոդնո, ասաց գերմանուհին, ցուրտ է, քունս տանում է:

Որովհետև կոնյակը քո մեջ արդեն հանգել է:

Իմ բաճկոնն իր ուսերին՝ Աբովյան փողոցով մենք իջանք հրապարակ, շատրվանի մոտ նա նորից սրսփաց և ասաց, որ ուզում է քնել: Հյուրանոցի դռանը ես ասացի.

Հյուրանոցը պատերազմից հետո կառուցվեց:

Այո՞, նա զարմացավ առանց զարմանքի, որովհետև, քունը տանում էր, չէր ուզում քունը փախցնել: Պատերազմն ինձանից առաջ է եղել, հորանջեց նա, պատերազմը չեմ տեսել: Դու տեսե՞լ ես, առանց հարցի հարցրեց նա:

Ես չուզեցի նրա քունը փախցնել: Չեմ տեսել, ասացի ես:

Ես Աբովյանով բարձրացա, Թումանյան փողոցով թեքվեցի, Թումանյանի Նալբանդյանի խաչմերուկն անցա ու կանգ առա. քնատ այդ կինն ինձ չէր տեսել, կարելի էր չգնալ: Ես քնատ էի, գուցե ես էի սխալ տեսել, գուցե ոչ մի կին էլ չկար: Ես որոշեցի չգնալ, բայց գնացի, և քարե սանդուղքին ոչ ոք չկար: Հիմա կարելի էր գնալ քնել և քնի մեջ անգամ զգալ, որ աշխարհը շռայլորեն, նվերի պես է գեղեցիկ և քեզ համար է գեղեցիկ, բայց հիվանդանոցի անկյունում ես բախվեցի այդ կնոջն ու մի

տղամարդու: Ծանր ոչխարահոտը խփվեց քթիս:
Զարի՞կ: Զավե՞ն, դո՞ւ ինչ բանի ես էստեղ, Թի:
Ճանաչելու հետ և ճանաչելուց էլ առաջ նրանք մի վայրկյան ժպտացին, նրանք մի քիչ ուրախացան այն բանի համար, որ իրենք մի օգնական ևս ունեցան, և նա իրենց օգնելու է այն գործում, որի մեջ իրենք էին:
Բա շներն ո՞ւր են:
Շները... նրանք նայեցին միմյանց, ապա կինը վիզը ծռեց ու կախվեց իմ հայացքից. Վանուն բերել ենք:
Վանուն բերել ենք, կրկնեց Զավենը:
Քու Վանուն բերել ենք, ասաց կինը: Որ քեզ տեսնի՝ շատ կուրախանա:
Շները կան, ասաց Զավենը:– Շները սարում են, Վանուն բերել ենք:
Անունդ տվել ենք ու բերել, ասաց կինը:
Ճիշտ է ասում, անունդ տվել ենք ու բերել, ասաց Զավենը:
Գնացքում քու մասին էր խոսում, ասում էր պրոֆեսորը մեր բանաստեղծի ընկերը կլինի, ասաց կինը:
Նրանք այնքան էին հոգնած, որ չէին կարողանում սուտը ճշտի նման ասել: Նրանք գյուղացիներ էին, նրանք խնդրում էին և չէին հավատում, որովհետև իրենց անարժան էին համարում թանկ, թաքուն, հրաշագործ դեղերին, (կաթեցնում են բամբակին ու հպում մեռնողի քո բերանին, և դու աչքերդ տրորելով վրա ես նստում՝ «շորերս բերեք»), անարժան էին համարում պրոֆեսորական ճակատների լուսավոր բռնկումներին և սպիտակ հագած գթության քույրերի փաղաքուշ հայացքներին: Անարժան էին համարում, կամ կարծում էին մենք չենք իրենց արժանի համարում մեր բուժիչ գյուտերի բռնկումներին և մեր թաքուն դեղերը տանում ենք մեզ համար:
Նրանց համար հիվանդությունն անորոշ էր, պրոֆեսորական կարեկցանքի ակունքն անհայտ էր (եսիմ գլո՞ւխ կդնի թե չի դնի), պրոֆեսորների կարողության չափն անորոշ էր և դարձյալ անհայտ էր քաղաքաբնակների մեր սրտում հարգանքն իրենց՝ հովիվներին

(կարող են, բայց կանե՞ն): Եվ մնում էր միայն խնդրելը: Այդ ամբողջ
անորոշի դեմ՝ խնդրելը, դարձյալ խնդրելը, խեղճ-խեղճ խնդրելը,
անընդհատ խնդրելը, որպեսզի այդ լատիներեն բառերի տակից,
այդ ակնոցների ետևից, այդ թանձր անհասկանալիության տակերից վերջապես
դուրս քաշվեր այն, ինչը որ իրենք միանգամից,
սուփրա գցելու պես, կդնեին քաղաքաբնակիդ դեմ՝ եթե դու
սարերում իրենց մոտ լինեիր:
Ռուսերեն էր խոսում, վիզը ծուռ՝ ասաց կինը:
Իրենց մեջ ռուսերեն խոսում էին, ասաց Զավենը:
Մեզ դուրս արին, իրենց մեջ իրենք ռուսերեն էին խոսում:
Հինգերորդից հանեցին, ղրկեցին ոչխարը, ռուսերեն
ո՞րտեղից էի սովորելու, ասաց Զավենը:
Զուր կուզի՝ չեն հասկանա, վիզը ծուռ՝ խեղճ-խեղճ երեսիս
նայեց կինը:
Համարյա թե ընկեր էինք, չե՞ս հիշում, էն է ընկեր էինք, բայց
թե իմ ռուսերենը կիսատ մնաց:
Նրանք մտածում էին, որ օտար լեզվի այդ պատի ետևում շատ
կարևոր մի բան այնպես չի լինում, ինչպես որ լինելու էր:
Հարկավոր էր, որ մեկն այդ պատի ետևում այդ լատիներենի, այդ
ռուսերենի, այդ ակնոցների, այդ անկարեկցության մեջ լիներ, բայց
լիներ իրենցից՝ գյուղացիներից:
Մեկ էլ, ինչքան որ պետք է, ինչքան որ պահանջի էդ գործը,
ասաց Զավենը, բերել ենք, կա:
Այդպես առանց անունը տալու հեռու ժամանակներում արջի
մասին են խոսել կամ այն գազանի, որից որ վախենալիս են եղել:
... վիզը ծռած՝ ասաց Զարիկը, և ես շատ ավելի բերանը
շարժելու ձևից հասկացա, որ խոսքը փողի մասին է:
Տեսնենք, ասացի ես, և նրանք մտածեցին, որ ես
խուսափում եմ:
Ինչ որ պետք է՝ կարվի, ասացի ես, և նրանց համար դա
ռուսերեն հնչեց:
Գիշերը քնե՞լ եք, հարցրի ես, և նրանք հասկացան, որ ես
իրենցից եմ: Գնանք տուն, թեյ խմենք, հանգստանանք, գիշերը

չենք քնել, ասացի ես, և նրանք տեսան, որ իրենց պես գիշերը ես էլ չեմ քնել, որ քաղաքում իրենք տուն ունեն, քաղաքաբնակ են, այլ ոչ թե հիվանդանոցի դռանը վիզները թեքած քնատներ: Հետո կգանք ու... լավ կլինի, հորանջեցի ես: Գիշերը չեմ քնել:
Ջուր կուզի՝ չեն հասկանա,– շշնջաց կինը: Չհամարձակվեց խնդրել և չհամարձակվեց առարկել, միայն շշնջաց:
Ռուսերեն չգիտի, ասաց Զավենը:
Իրենք հայերեն գիտեն, ասացի ես, իրենք հո ռուս չեն, իրենք հասկանում են հայերեն: Գնանք լողացեք, մաքրվեք, թեյ խմեք, հանգստացեք, ասացի ես, գիշերը չեք քնել: Գնանք լողացեք:
Իրենց ոչխարահոտի մեջ նրանք կծկվեցին, և այդ պահին իմ բաճկոնի բույրն ինձ դուր եկավ: Նրանք կարծես թե համաձայն էին գալ, քնել, մոռանալ, տաքանալ, նրանք, սակայն ոտքները դարձյալ կախ էին զցում: Նրանք գյուղացիներ էին, նրանց այնպես էր թվում, թե անհայտության պատի ետևում հրեշը մարդ է խժռում և մարդուն օգնող չկա: Նրանք չգիտեին, թե ինչքան դուրեկան է, երբ քո բաճկոնը եղել է մեկի ուսերին և նրա բույրը բերել է իր հետ, և դու այդ բույրի մեջ ես, և քեզ համար անտանելի է ծանր ոչխարահոտը:
Եթե հարկավոր է, չոր շրթունքները շարժեց Զավենը, և ես հասկացա, որ խոսքը դարձյալ փողի մասին է: Փողը նրանք դժվարությամբ են վաստակում և նրանց թվում է, թե փողն արդեն ամեն ինչ է: Եթե պետք է, ինչքան որ պահանջվի՝ բերել ենք, տնքաց Զավենը: Թանկ դեղ է, ուրիշ տեղից ուրիշ պրոֆեսոր կանչել է, եսիմ, հազար ու մի հարկավորություն:
Սիրտը ջուր կուզի՝ կամաչի, ասաց կինը:
Վանին կամաչի՞, ժպտացի ես, թի՛...
Հին Վանին չի, ասաց Զավենը, համ էլ, դե սարերն ուրիշ, էստեղ ուրիշ: Մաշվել, հատել է խեղճ Վանին:
Սիրտը ջուր կուզի, ինքը չի կարող ուզել՝ չեն հասկանա, ասաց կինը:
«Ասատո՛ւր հե՛յ», հիշեցրի ես: Դու ոնց էիր ծիծաղո՞ւմ,

«թի-թի-թի»:
Չոր շրթունքները նա անձայն շարժեց, վիզը թեքեց և ոտքից ոտք փոխվեց: Նա բան չասաց: Մենք կաշկանդված ու լուռ էինք և ոչինչ չէր պատահում, և այդ ժամանակ դռդռաց ու հարևան խաչմերուկը կտրեց-անցավ պայծառ ավտոբուսը: Ավտոբուսն անցավ, և մայթը լցվեց աղջիկներով: Եվ դարձյալ այնպես էր, ինչպես որ եղել էր երբևէ ես կարծես թե գյուղ էի փախչում և կարծես թե ինձ դարձյալ բռնել էին և դարձյալ աչքս էին խոթում և դարձյալ քիթս էին խոթում և բերանս էին խոթում քաղաքի ամբողջ գեղեցկությունը, և դա հաճելի ու տհաճ էր սրտխառնուքից հետո վախելու պես: Աղջիկները եկան, գեղեցկացան, պայծառացան, խոշորացան, բուրեցին, (և գյուղացիներս սեղմվեցինք հիվանդանոցի պատին), դարձան ինստիտուտի ուսանողուհիներ իրենց դասախոսի ղեկավարությամբ և մտան հիվանդանոց: Նրանք այնքան լավն էին, որ մեզ թվաց, թե մենք էլ լավն ենք: Մենք պատից հեռացանք ու ազատ շունչ քաշեցինք, և ինձ թվաց, թե այդ հիվանդանոցում որևէ լավ բան կա, թե արբանյակները լողում են և նրանց մեծ ազատության տակ այդ հիվանդությունները մանրիկ բաներ են:
«Աշխարհը մե՛ծ, պայծա՛ռ, Նորքի արևոտ այգիներից մինչև...» ես ներս մտա, և աղջիկները հանվում-հագնվում էին: Հերակալը շրթունքների մեջ՝ նրանցից մեկը ծոծրակին շտկում էր դարչնագույն ծանր մազերը և խաժ աչքերով նայում էր ինձ: Նայում էր ինձ, բայց չէր տեսնում, այլ հավաքում էր ծանր մազերը: Սպիտակ, մաքուր խալաթները նրանք կոճկեցին, հագան օսլայած սպիտակ թասակները, քունքի մի թել մազն անցրին ականջի ետևը, և հիմա պատրաստ էին դասախոսի հետ բարձրանալ, կանգնել հիվանդների դեմ: Պատրաստ էին, բայց դասախոսը չէր առաջնորդում, և նրանք լրջանում ու ավելի էին լրջանում, բայց այդպես էլ չէին կարողանում լրջանալ, որովհետև հրճվանքը զնգում էր նրանց մեջ:
Մարմարե հատակը փայլում էր նեոնային խաղաղ լույսի տակ, շատ առողջ ֆիկուսի մուգ-կանաչ տերևները խնամքով սրբված

էին և մաքուր փայլ էին տալիս, («բայց այդ փայլը այնուամենայնիվ մեռյալ փայլ է», դրսի գյուղացիներից և իմ միջի գյուղացուց թաքուն մտածեցի ես), և այդ լռության մեջ ուսանողուհիների սպիտակ խումբը լրջանում էր: Հարկավոր էր հիվանդների մոտ բարձրացնել ոչ թե մաքուր առավոտի, գերմանուհու թեթև բույրի և արևոտ այգիների քո հրճվանքը, այլ առողջ, խելացի, բանիմաց և ոչ տխուր մարդու քո բարկությունն այդ անպիտան ցավի դեմ:
Դասախոսը շարժվեց, ուսանողուհիները գնացին, և ես գնացի:
Դա վերջացած պատմություն էր: Քառանց մի քիչ կաղ, մի քիչ շեկ, մի քիչ չեչոտ, աչքի բիբն սպիտակ Վանին մնացել էր Է՛ն հեռու ժամանակներում իր ծղրտոցի և ուրիշների կանչերի մեջ, և բերվել, մահճակալի մեջ ծածկոցի տակ էր դրվել մի գիրկ այն նյութերից, ինչերից որ ստեղծված էր բերանը կիսաբաց ու աչքը կկոցած Քառանց Վանին, բայց դա Քառանց Վանին չէր, Քառանց Վանին մնացել էր էն հեռո՛ւ... Դա երեկ գիշերվա կրակը չէր, դա կրակատեղի այսօրվա մի բուռ մոխիրն էր:
Այդ գորշ ծածկոցի վրայով (ես այդ պահին հիշում էի ուրթի մոտ խոտերի մեջ ընկած յափնջին, որի տակ շան լակոտներ էին խլրտում)... պրոֆեսորը նայում էր ինձ այդ գորշ ծածկոցի վրայով, ես նայում էի պրոֆեսորին և սպասում, որ նա հիմա կասի՝ «ամեն ինչ կանենք», բայց նա միայն նայում էր, և ես սպասում էի, թե նա հիմա-հիմա ասելու է՝ «դժվար է, բայց կբուժենք», սակայն նա չէր ասում, այդ գորշ ծածկոցի վրայով նայում էր ինձ, ես նայում էի նրան, և նա չէր ասում՝ «գոնե մի քիչ շուտ բերեիք»:
Սպիտակ հագած ուսանողուհիները եկան, դասախոսի հետ կանգնեցին մահճակալի դեմ:
Քեզ համար տես ինչ աղջիկներ են եկել, Վանի, ասաց պրոֆեսորը, և այդքանը կարող էի ես էլ ասել:
Վանի Քառյան Ստեփանի, ուսանողուհիների համար ասաց պրոֆեսորը, հովիվ, քառասուն տարեկան, ամուսնացած, չորս երեխայի հայր, կրթությունը՝ քառամյա, Թումանյանի շրջանի Ահնիձոր գյուղացի, վերջացրեց պրոֆեսորը, և այդքանը ես էլ կասեի: Այդքանը Թի Զավենն էլ կասեր: Եթե արտասուքը չխեղդեր՝ Զարիկն էլ

կասեր: Այդքանն այստեղի՝ ապրողներիս աշխարհի բաներն էին և բոլորս էլ գիտեինք: Իսկ որ պատի ետևում Հրեշը
մարդ էր լափում... Պրոֆեսորը նայում էր դասախոսին, դասախոսը նայում էր պրոֆեսորին, և նրանք ուսանողուհիներին ու միմյանց, բան չէին ասում այն մասին, թե ինչ է կատարվում գորշ ծածկոցի տակ: Պրոֆեսորը բռնեց նրա ձեռքը, պահեց նրա ձեռքն իր մատների մեջ, և այդ ժամանակ ինձ թվում էր, թե պրոֆեսորը մի բան է վճռում, հետո դրեց մոխրագույն այդ ձեռքը ծածկոցին, բայց ոչինչ էլ չէր վճռել, միջամատով միայն, կամացուկ ծեծում էր մոխրագույն այդ ձեռքը, և ասաց հենց այնպես առանց հարցի.
Ո՞նց ես, Վանի:
Ուշ և թույլ, համարյա թե անլսելի, եկավ պատասխանը, այնքան անլսելի, որ ինձ թվաց, թե իմ ներսում ես եմ ասել՝ «լավ եմ», և որովհետև պրոֆեսորը մոխրագույն այդ ձեռքը դեռ բռնած էր և միջամատի ծայրով կամացուկ ծեծում էր այդ ձեռքը, ինձ թվաց, թե պրոֆեսորը նրա հետ խոսում է մորզեով, իսկ նա գտնվում է այդ գորշ ծածկոցի տակ այդ մոխրագույն մարմնի ծանր խորքերում, և մեր ձայները չեն հասնում նրան, աղջիկների հրճվանքը չի հասնում նրան, և պրոֆեսորը նրա հետ խոսում է մորզեով:
Հիշում ե՞ս, Վանի, որ քեզ համար շներ գողացա, ասացի ես, որ թուրքը... որ Ասատուրը... որ էծերը՝ իծանը...
Պրոֆեսորի մատների մեջ նրա ձեռքը կարծես թե շարժվեց, հետո ծածկոցի տակից եկավ նրա ձայնը.
Շները ոռնում են:
Քեզ համար տես ինչ աղջիկներ են եկել, ասացի ես:
Աղջիկների հրճվանքը նրա մեջ չէր ալեկոծվում: Նրա միջի Հրեշը կլլում էր այդ հրճվանքը:
Շները ոռնում են, սաաց նա, և պրոֆեսորը մատների ծայրով տկտկացրեց նրա ձեռքը:
«Վանի, խի՞ ես էդքան լավը: Լավը չեմ», հիշեցրի ես, որ Արտեմ քեռին փչում էր...– որ Ասատուրի մեդալները աստղում էին... «Մայո՛ր»:

Սարերի կանչերը նրա մեջ, սակայն, չէին զնգում: Հրեշը կլլում էր այդ կանչերը:
Ոչինչ, ասացի ես, պրոֆեսորը հիմա մի լավ սրսկում կանի՝ վեր կկենաս, կգնանք սարերը: Խոսք տուր, որ պրոֆեսորի համար մի ոչխար ես մորթելու: «Թուրքի բե՞կ եմ, խա՞ն եմ»:
Պրոֆեսորը նայեց ինձ, և ես հասկացա, որ Հրեշը կլափի սրսկումը նույնպես: Հետո ինձ ասացին, որ նրա շները ոռնալ էին սկսել այդ պահից: Փողոցում լռություն էր, հիվանդասրահում լռություն էր, իսկ նրա ներսում՝ ինչպես ջրի տակ, և իր լռության մեջ նա լսում էր շների ոռնոցը: Դա վերջացած պատմություն էր:
Մի քիչ ազոտի, մի քիչ երկաթի, մի քիչ կրի այն փուխր միացությունը, որ կոչվում է մարդկային կյանք, քայքայվել էր, մնացել էր ազոտի, երկաթի, կրի մի փոքրիկ կույտ, և շները ոռնում էին ավերակների վրա:
Տարօրինակ է, ասացի ես պրոֆեսորին, Հրեշը չի թողնում, որ խեղճ տղան վերցնի աղջիկների հրճվանքը, ուտելիքի հրճվանքը, Հրեշը լափում է խեղճ տղային, բայց չէ՞ որ, պրոֆեսոր, տղայի մահով Հրեշն էլ է վերջանալու, ուրեմն ինչո՞ւ է, պրոֆեսոր, Հրեշը ոչնչացնում ինքը իրեն:
Նա ուրախ էր, որ հիվանդության անունը ես չեմ տալիս: Նա վախենում էր այդ հիվանդությունից:
Գիտեք ինչ հովիվ էր, գիտեք ինչ կատակ էր անում, գիտեք սիրտն ինչքան էր բարի, ասացի ես, հրճվանքը մեջը չէր տեղավորվում, բաժանում էր ամբողջ ուրթին: Եթե այդ հրճվանքից հիմա մի քիչ...
Ռեհանի բույրը քեզանի՞ց է գալիս, ասաց պրոֆեսորը:
Իմ բաճկոնից էր գալիս ռեհանի բույրը, և մենք խոսեցինք արևոտ այգիների, ծովափի, ֆուտբոլի, արբանյակների հանդարտ սահքի, բասկետբոլային կանանց բարձրահասակ խմբի մասին, որոնք եկել են մրցումների և պայուսակները ճոճելով երեկոյի մեջ թրև են գալիս, և այն մասին, որ անբացատրելիորեն հաճելի է՝ երբ անձրևի տակ մեքենայով ճանապարհ եք գնում, լուռ եք և մաքրիչները դեմի ապակին մաքրում են... և դժվար էր անդրադառնալ, որ

ներքևում ինձ սպասում են: Եվ մենք դարձյալ
խոսեցինք ֆուտբոլային կանաչ դաշտի և աջ եզրայինի կտրուկ
սլացքի մասին:
Տար՝ թող քնեն, հանգստանան, հետո կհայտնես, ասաց
պրոֆեսորը: Հետո կսրսկենք՝ գուցե թե գյուղ հասնի:
Սևանով Դիլիջանով Դսեղով հինգ ժամվա ճանապարհ է,
պրոֆեսոր, ասացի ես, այդքան ժամանակ Հրեշը կքնի՞:
Նա ակնոցի տակ տրորեց ակնաղբյուրները և ասաց, որ
ուրախ է ինձ ողջ-առողջ տեսնելու համար:
Յասամանի թեթև բույր է գալիս, ասաց նա, թե՞ ռեհանի:
Իջնելիս ես հանկարծ հասկացա, որ, ընդհակառակը,
հարկավոր է հիմա հայտնել՝ քանի դեռ այդպես քնատ են, այդպես
լավ չեն հասկանում, այդպես շշմած են և ցավն իրենց մարմին
առնելու ուժ չունեն:
Զարիկը բերանը լուռ շարժեց ու ընկավ իր կապոցի մոտ,
կարծես թե կախիչից վերարկու ընկավ, բերանը կիսաբաց՝
Զավենը ժպտաց ու մնաց այդպես ժպտալով: Ծխելով՝ ես նայում
էի Նորքի արևոտ այգիներին և հիշում էի ամայության մեջ յափնջու
մոտ ընկած կարմիր գամփռին կարծես թե ես էի տեսել:
Դե լավ, դուք ողջ լինեք, վեր կաց, ասացի ես:
Տղեդ ո՞նց Է, որ շաղոտ իրիկվա մեջ սպիտա՛կ՝ վազում Էր,
ասացի ես:
Մարդիկ նայում են, ամոթ է, վեր կաց, ասացի ես:
Ասա՝ թող վեր կենա, Զավեն, ասացի ես:
Վեր կաց, ասացի ես, քեզ եմ սպասում, գիշերը չեմ քնել:
Այդ գյուղացիները կարողանում են իրենց վիշտը ենթարկել
ուրիշի կարիքին: Նա սկսեց բարձրանալ, բայց նորից փլվեց:
Գիշերը չի քնել, ասաց Զավենը, վեր կաց:
Եվ նա վեր կացավ: Տաքսու մեջ նա ուռչում ու ուռչում էր, նա
հիմա փոձկալու էր, բայց ձենը կուլ տվեց և թուխ, նիհար ու
կնճռոտ՝ սկսեց դուրս նայել: Այդ օտար քաղաքում օտար
մարդկանց մեջ նա իրեն իրավունք չէր տալիս իր վշտով
պղտորելու ուրիշների զնգան հրճվանքը:

Ես միացրի տաք ջուրը և նրան հրեցի լողասենյակ, քաղաքաբնակի իմ կամքին նա չհակառակվեց: Ես մտածում էի, որ
ցնցուղի վշշոցի ու գազավառի աղմուկի մեջ նա կարող է արտասվել սրտի ուզածի չափ, բայց ուրիշի այդ փայլուն սպիտակ
լողասենյակում նա իրեն իրավունք չտվեց ոռնալ գեղջկուհու իր լացը: Նա այնտեղ օճառվեց, և տաք ցնցուղը հաճելի էր, և
օճառվելով տեսավ, որ Վանին մեռնում է, բայց Վանի՛ն է մեռնում,
իսկ սրանք իր ոտքերն են, իր փորն է, և օճառն ու տաք ջուրը
հաճելի են, իր թևերն են, իր վիզն է... իր երեխաներն են, և ինքը
կթվորուհի է և պետք է աշխատի հիմա նաև Վանու փոխարեն:
Ոչխարը հիմա մենակ ո՞նց ես պահելու, ասացի Զավենին:
Թե իր ներսում իր Վանու մասին ինչ կար՝ նա ինձ բան չասաց:
Մեր գործը հեշտ է, բազկաթոռի եզրին ուղիղ նստած՝
ասաց նա, ձեզանից պատմիր:
Ո՞ւմ ես ընկեր վերցնելու:
Ղեկավարությունն ում որ տա:
Ոչ ոք Վանի չի դառնա, ասացի ես:
Ոչինչ, ասաց նա, ոչխար է, էլի, կպահենք, դու ձեզանից
պատմիր:
Զարիկն այնտեղ ցնցուղը փակել էր, բայց լողասենյակից չէր
ելնում: Մի քիչ մտածելով՝ ես հասկացա, որ նա իրեն իրավունք չի
տալիս գեղջկուհու իր մարմինը սրբել քաղաքացու մեր ցամքոցով
և այդպես կանգնած սպասում է չորանալու: Ես լողասենյակի
դուռը ծեծեցի և ասացի, որ այնտեղ սրբիչներ կան, և նա շտապ
վիզն անցրրեց գեղջկուհու իր զգեստը, որովհետե կարելի էր թաց-
թաց հագնվել, բայց չէր կարելի ցամաքելու սպասելով ուրիշներին
մտածել տալ, թե ինքը այդ լռության մեջ, մերկ, կանգնած է
ցամաքելու:
Երբ սենյակ եկա՝ Զավենը նիրհում էր բազկաթոռի եզրին
ուղիղ նստած, նրա մեջքը ծալվում ու գլուխը հակվում էր կրծքին:
Բայց նրանք չքնեցին, բազկաթոռի եզրին և բազմոցի եզրին իրար
դեմ նստած՝ նրանք կերան իրենց պանիրը, հացը, խաշած ձուն՝
իրենց աղով, բերանները հազիվ հպելով՝ ուղղակի եզրից մի-մի

բաժակ թեյ խմեցին մեր բաժակներով, հետո Զարիկը լվաց այդ բաժակները, ինչպես բացել էին այդպես էլ տեղը-տեղին հավաքեցին իրենց սփռոցը մեր սեղանի վրայից և վեր կացան.
Գնացինք:
Քնենք հանգստանանք՝ հետո:
Չէ, մենակ՝ ավտոբուսը որտեղ է կանգնում՝ չգիտենք:
Ծանր օր է սպասվում, քնենք հանգստանանք, ասացի ես:
Գործի տեր ենք, ասաց Զավենը, գնացինք:
Ավտոբուսն ուշ շարժվեց, և այդ շոգի մեջ նրանց քունը տանում էր: Զավենի գլուխը հակվում էր կրծքին, ուղիղ նստած Զարիկն անթարթ նայում ու չէր տեսնում: Դրսից ձեռքի և գլխի շարժումներով ես Զավենին հասկացրի, որ իր քունը տանում է: Նա հասկացա՞վ, չհասկացա՞վ ժատաց և գլխով արեց: Ավտոբուսը շարժվեց, ես շուռ եկա տուն գնալու, քնելու և որտեղից որտեղ ասացի.
Որ սարից փախած սոված շները
Կտերը պիտի ոռնան, կլանչեն...
Եվ նորից.
Որ սարից փախած սոված շները
Կտերը պիտի ոռնան, կլանչեն...
Երբ քնից արթնացա, ռեհանի բույրը թրթռաց իմ ռունգներում, և իմ մարմնի մեջ խաղաց ոտից գլուխ իմ առողջության հրճվանքը, և մաքուր սպիտակեղենի՛, և կիպ շապիկի՛, և պինդ մկաններիս ու սառը ջրի՛... Ժատալով՝ ես մեծ մաքուր հայելու դեմ սկսեցի սրբվել և ասացի ինքս ինձ.
Որ սարի սովոր Սարոյի նանը
Էլ սար չի գնա, Սարո չի կանչի,
Որ սարից փախած սոված շները
Կտերը պիտի ոռնան, կլանչեն...
Ես տաքսի նստեցի՝ գերմանուհու ետևից գնալու օդանավակայան, բայց գնացի Խոցերի հիվանդանոց: Դուրսը մայթին ոչ
ոք չկար: Սրահում մարդ չկար, միայն փայլուն ֆիկուսն էր: Նրա անկողինը դատարկ էր, գորշ ծածկոցին հիմա մաքուր սպիտակ

նոր բարձ էր դրված: Պրոֆեսորն աշխատասենյակում չէր: Աղբի
ցանցը նրա գրասեղանի մոտ դատարկ էր և գրասեղանի ապակին՝
սրբված: «Տուն են գնացել», ասաց միջանցքի հավաքարարը: Հյուրանոցի մոտով,
որ պատերազմից հետո է կառուցվել, ես մեքենան
քշել տվեցի օդանավակայան, բայց, իհարկե, արդեն ուշ էր.
գերմանուհին արդեն օդում էր, և նրա տակ մի բուռ Սևանն էր,
երևացող–չերևացող խճուղին և մանրիկ, բզեզի չափ ավտոմեքենաները, և նրա
դեմ ու տակ Ահնիձորի մեր բաց սարերն էին,
և օդանավի աղմուկը հավասարապես մաղվում էր Սևանի,
սարերի, ավտոմեքենաների վրա, որոնցից մեկի մեջ Զարիկն ու
Զավենը փոխնիփոխ ասում էին Վանուն.
Հիմա քո սարերը կերևան:
Մի քիչ էլ համբերիր՝ քո սարերը կերևան:
Հենց որ սարերը տեսնես՝ ցավը քո միջից կանցնի:
Այ, հիմա՛հիմա կտեսնես:
Ձեռքները նրա մեջքի տակ, նրա գլխի ու վզի տակ, նրա
կողքերից պահած, ուսները նրա թևերի տակ՝ նրանք ասել էին.
Այ, էն բլուրն էլ դեմներիցս անցնի...
Շան ոռնոց եմ լսում, ասել էր նա, շներ են ոռնում:
Դե տղամա՛րդ եղիր, ասել էր Զավենը:
Ինքնաթիռ է, նրա ձենն է, շները չեն ոռնում, ասել էր
Զարիկը:
Սարերն ինքնաթիռից երևում են,– ասել էր Զավենը,– հիմա
մենք էլ կտեսնենք: Շները,– ասել էր Զավենը, ուրթը, ասել էր
Զավենը, Շիշթափը...
Տեսա, վիզը ձգել ու պաղել էր Վանին, էլ չի ցավում:
Գառնաքարը, ասել էր Զավենը,– կարմիր կակաչների
խումբը՝ ոնց որ դպրոցական աղջկերք, ասել էր Զավենը, մի՞տդ
է, որ ասի «Վանի, փախիր, պսակում են»... ձորի անտառները,
ասել էր Զավենը, ձորի անտառներում իմ ու քո անունը հազար
տեղ դու ես գրել, հազար տեղ՝ ես, բայց ների դու ինձանից լավ ես
նկարում:
Վ. Ք. մի արև օր

Զ. Թ. 1949

Մեր, ա՛յ մեր, հետո ի՞նչ եղավ: Շորի մեջ կարծես մարդ չկար
Զավենը շորի պես ծալվում էր, քնիր, քնիր: Մեր, այ մեր, բա
Զարի՞կը: Զարիկը չկարողացավ լաց լինել, երկու անգամ նվաղեց՝
զոռով ուշքի բերինք, ուշքի բերինք ու խնդրեցինք լաց լինի, որ
չնվաղի, բայց չկարեցավ լաց լինի, նորից նվաղեց, հետո գերեզմանոցից
հանեցինք, մազերը սանրեցինք, գլխաշորը կապեցինք,
դույլը ձեռը տվինք՝ գնաց ֆերմա՝ կթի, կթվոր է. աշխարհը մեծ է,
քնիր, քնիր: Մեր, այ մեր, էն ի՞նչ ձեներ են գալիս: Շների, քնիր,
քնիր: Իսկ հե՞րը, այ մեր: Հե՞րը... զոհված մեծ տղայի վրա հերը
տարիների հետ, տարիների հե՛տ երգ էր կապել, հետո տղան որ
էդպես մնաց ռուսաստանների ու գերմանիաների անհայտություններում հերը մեծ
տղայի երգը Վանու վրա երգեց, տխուր,
երկար, ահալի երգ էր, կարծես երեխա լինեիր, գիշեր լիներ ու
քամին վառարանի մեջ երգեր, բայց ծեր է, ատամ չունի, լավ չէր
երգում՝ ժողովուրդը դժգոհեց, երեխեքը թաքուն ծիծաղում էին:
Մեր, այ մեր, իսկ Դանելանց Արտեմ քեռին չնվագե՞ց, այ մեր,
չնվագե՞ց Արտեմ քեռին: Արտեմը նվագո՞ւմ է որ: Բա չես հիշո՞ւմ,
այ մեր, որ սարում նվագում էր: Սարում նվագում էր, հիմա չի
նվագում շրթունքները մաշվել են, թոքերը մաշվել են, քնիր, քնիր,
կյանքը գնում է, մեծերը գնում են, երեխաները գալիս են, ոչ մեկը չի
ուզում հովիվ լինել, ոչ մեկը Վանի չի դառնա, քնիր, քնիր: Իսկ
Վանո՞ւ երեխեքը, այ մեր: Քնիր, քնիր, վիշտը երեխաների համար
չի, տղան ձորում ֆուտբոլ էր խաղում տղաների հետ, աղջիկն
աղջիկների հետ՝ տապկնոցի. տարիների, տարիների հետ է վիշտը
մտնում մարդու մեջ: Մեր, այ մեր, էն ո՞վ է կանչում:
Նա ականջ դրեց, ես ականջ դրեցի, և դա մարդկային ձայն
չէր շների հեռավոր աղիողորմ էր, ասես հեռու միջնադարից էր
գալիս, Թամուրլանգն ասես անցել ու հանգցրել էր գյուղը, և շունը
լուսնի տակ լաց էր լինում հանգած գյուղի վրա ավուուուուուուուու...
ավուուուուո՛ւ... և հեծյալ օգբեգներից մեկը ձիու գլուխը
շուռ կտար, կգար, կնետահարեր այդ վերջին շանը՝ այդ ավերակ
գյուղում... ավուուուուո՛ւ...

Մեր, այ մեր...
Այ մեր, քնա՞ծ ես...
Ես շորերս հագա, կոշիկներս հագա, գլխարկս դրեցի, բայց կարծես թե իմ ոտքերը չէի մտցնում իմ կոշիկների մեջ, և դուրս եկա: Ես տուփից սիգարեթ հանեցի և տարա բերանս, բայց իմ բերանում սիգարեթ կար: Իմ բերանում սիգարեթ կար, իմ ձեռքին լուցկի կար, իմ հագին իմ կոշիկներն էին դա ես էի: Դա մեր գյուղն Էր: Դա մեր գյուղի լուսինն էր: Գյուղը խաղաղ քնած էր լուսնալույսի մեջ: Եկավ ու գյուղի վրա հոինդ մաղեց մարդատար օդանավը: Աստղերի մեջ նրա կարմիր կրակները ես հեշտությամբ գտա: Եվ տարօրինակ էր, որ միասին այդպես կային թամուրլանգյան ժամանակների այդ վայոցն ու այդ հոինդը: Հոինդը թուլացավ, մարեց, իսկ կարմիր կրակները դեռ երևում էին, և կարմիր կրակների հետ մարմրում Էր վայոցը աուուուու՛ւ...
Ի՞նչ ես ուզում, շուն, Թամուրլանգն անցել է, բայց վաղուց, քոչվորների քոչերն անցել են, բայց վաղուց... Թե՞ դու պառավել էիր, քոչը քեզ լքել Է, և դու լաց ես լինում անցած քոչի ու քո մահվան վրա: Թե՞ դու մի բան գիտես, որ ես չգիտեմ, շուն, և դու օգնություն ես ուզում:
Ես մտա մեր տան մոտի ձորը, (ձորում ոռնոցը թույլ էր, ասես գետնի տակ էին վայում), ձորն անցա, ելա գերեզմանոցի մոտի բլուր և ոռնոցը գերեզմանոցից էր գալիս: Ես այդպես կանգնած էի, և գերեզմանոցը, այգիները, տները քնած Էին այդ վայոցի մեջ ավուուու...
Հանդիպակաց օդանավը եկավ, հոինդ մաղեց գյուղի վրա, և նրա կարմիր լույսերը քանի դեռ իմ գլխավերևն Էին՝ ես ձորն անցա, մտա գերեզմանոց և գտա: Նրանք հենց իմ կողքին էին, մեկը չէր, երկուսն էին, գետնին տափակված, գլուխները թաթներին՝ նվում էին: Նրանք ինձ չտեսան, նրանք ոչինչ չէին տեսնում, նրանք մի ուրիշ աշխարհում էին: Մի քիչ էլ նայելով՝ ես ճանաչեցի կարմիր գամփռին: Մյուսը նույնպես կարմիր էր, բայց կատվի կարճ մազով, տափակվել ու բարակ նվում էր:
Ի՞նչ եք ուզում, շներ, Վանին մեռել է, բայց էդ ո՞վ է անմահ:

Հիմար, հիշո՞ւմ եք, ես եմ ձեզ գողացել, առողջ, սառը գարնան մեջ դուք ձեր մոր հետ գնում էիք, հիշո՞ւմ եք: Ձեր ոչխարը հիմա ո՞վ է պահելու: Գյուղը քնած է, ամեն մեկն իր տան մեջ իր անկողնում փափուկ քնած է, ինչ եք...
Նրանք ինձ չէին լսում, նրանք առհասարակ չէին լսում, նրանք չէին տեսնում, իրենց խլության ու կուրության ետևում՝ նրանք մի ուրիշ աշխարհում էին– դե գնա ու հասկացրու նրանց, որ այս մեծ լուսնի տակ համարյա թե ոչինչ չի փոխվել: Ավուուուուուուու...
Այ տղա է՛յ, սար գնացող այ ձիավոր, է՛յ, էդ ով ես, է՛յ, չգիտեմ ով կանչեց չգիտեմ ում, էդ ո՞վ ես, է՛յ, Թի Զավենին ասա գա էս շները տանի, էս շները տանի, տանի, Թի Զավենին ասա գա էս շները տանի, շները:
Լսեցի, լսեցի, գա շները տանի, լսեցի:
Եվ մեկն ասաց. «Ամբողջ գիշերը համերգ էին տալիս», և ծիծաղեցին, հետո մեկն ասաց. «Իբր էդ ուր է տանելու, պառավել, սատկելներու ժամանակն է»:
Բայց դեռ երեկ նրանք փափուկ լակոտներ էին, մոր կողքերից վազում ու գլորվում էին, վազում-վազում ու գլորվում, ըկնում էին իրենք իրենց տակ: Հովվաշները շուտ են պառավում: Քնում են քիչ, չարչարվում են շատ ու շուտ են պառավում: Կարկուտի ու անձրևի տակ, գողի ու գայլի դեմ, անցած-գնացած հեծելազորերի և գալիք հեծելազորերի հեռավոր դղրդոցը թաթների տակ՝ գետնի մեջ... և դեռ լուսնի անհասկանալիությունը, և դեռ այն, որ գիշերվա խաղաղության մեջ նրանք տեսել էին նրան, ով որ եկավ, բաց աստղերի տակ համբուրեց քնած Վանու բաց ճակատը: Նրանք այդ տեսել էին և սկսել էին ոռնալ:
Ես գնում էի խոտ հավաքելու, թփուտ լանջում մի տեղ կարմիր գամփռը սահեց ու անցավ դեպի գյուղ: «Բոբ, կանչեցի ես, ԲոբԲոբ», բայց նա ինձ չլսեց: Նա ինձ չտեսավ: Արար աշխարհում նա հիմա միայն մի բան էր ճանաչում՝ Վանու գերեզմանը, և նվալով քարշ էր գալիս դեպի գյուղ: Սարում նա չէր մնացել, մյուսը մնացել էր, նա չէր մնացել, կապը կրծել կտրել էր ու... առուուու-ուուուուու... երեք ցերեկ ու գիշեր: Ցերեկները դպրոցի զանգի ու

աղմուկի, գյուղի կանչերի, աքաղաղների գիլ ծղրտոցների ու տրակտորների դղրդոցի մեջ նրա նվոցը չէր լսվում, բայց գիշերները միայն նրա նվոցն էր՝ ավրըրը...
Տղերքն անտառապահի հրացանն ուզեցին, և անտառապահն ինքը եկավ: Տղերքից մի երկուսն ասացին «մեղք է», բայց այդտեղ Անտոնյան Զավենն ասաց. «Իմ երեխեքն ավելի են մեղք»: Նրա տունը գերեզմանոցի մոտ է, և շունն ամենից շատ նրանց ականջների մեջ էր վայում: Անտոնյսն Զավենն ասաց. «Իմ երեխեքը մեղք չեն, շո՞ւնն է մեղք»: Անտառապահը գնաց մտավ գերեզմանոց, կանգնեց շան դեմ, հրացանն ուսից իջեցրեց, փողը դրեց շան աչքերի մեջտեղը, իսկ շունը վայում էր ավուուո՛ւ...
Շունը մնաց այդաես գլուխը թաթերին պառկած, թեև հրացանը ճանաչում էր:
Պատերազմից հետո, երբ ես փոքր էի և սարում էի և Վանու համար շներ գողացա, երբ գայլը շատ էր, և բոլոր հովիվների համար միայն մի մաշված Չամբար կար, երբ Վանուն ամուսնացրին, երբ Ասատուրը բանակից եկել էր, երբ Դանելանց Արտեմ քեռին դեռ շվի էր փչում, երբ թուրքերի քոչը գալիս ու գալիս էր, այդ գարնանն ահա հովիվներին հրացան էին տվել, ամեն մի կրակոցի շները ցրիվ էին գալիս և այդ գարնանից ահա այդ շունը ճանաչում էր հրացանը, վախենում, էր հրացանից, բայց հիմա չփախավ, մնաց այդտեղ, գերեզմանի վրա: